

Տարբերակ 5/13/2013

77669

**Կառավարման խնդիրների լուծումը՝ Հայաստանի բարձրագույն
կրթության բարեփոխումների կենտրոնում**

2013 թ. հունվար

Բովանդակություն

Երախտիքի խոսք	i
Համառոտ ամփոփագիր	1
I. Ներածություն.....	6
II. Ամբողջ համակարգի կառավարման կառուցվածքը	11
2.1 Բարձրագույն կրթության տեսլականը.....	11
2.2 Բարձրագույն կրթության ղեկավարության կարողությունները	12
2.3 Կարգավորող դաշտը	13
2.4 Որակի ապահովումը.....	24
2.5 Բարձրագույն կրթության ֆինանսավորումը	27
III. Ինստիտուցիոնալ կառավարումը	35
3.1 Ինքնավարությունը	Error! Bookmark not defined.
3.1.1 Կազմակերպչական ինքնավարությունը	35
3.1.2 Ակադեմիական ինքնավարությունը.....	43
3.1.3 Մարդկային ռեսուրսների կառավարման ինքնավարությունը	46
3.1.4 Ֆինանսական ինքնավարությունը	50
3.2 Հաշվետվողականությունը	52
3.2.1 ԲՈՒՀի արժեքային համակարգը	Error! Bookmark not defined.
3.2.2 Ֆինանսական ամբողջականությունը	54
3.2.3 Ուսանողների մասնակցությունը.....	56
3.2.4 Կառավորման և վարչարարության կարողությունները.....	57
IV. Եզրակացություն	59
Հղումները	

Երախտիքի խոսք

Սույն զեկուցը պատրաստվել է Համաշխարհային բանկի կրթական թիմի կողմից՝ Սաչիկո Կատակայի (կրթական ոլորտի տնտեսագետ) ղեկավարությամբ: ԲՈՒՀ-երում, Կրթության և գիտության նախարարությունում և այլ շահակիցների մոտ դաշտային հետազոտություններն իրականացվել են Անուշ Շահվերդյանի և Հովհաննես Հարությունյանի (խորհրդատուներ) կողմից: Գաբրիել Բալայանը (խորհրդատու) մանրակրկիտ փորձագիտական օգնություն է մատուցել Հայաստանի բարձրագույն կրթության օրենսդրության վերաբերյալ: Թիմը երախտապարտ է Ադրիանա Ջարամիլլոյին (կրթական ոլորտի ավագ մասնագետ), Սունիտա Կասարայուին (խորհրդատու) և Օդիլ Կարիոյին (խորհրդատու) մեր հետազոտության երկու գործիքների կիրառման ընթացքում տեխնիկական խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերելու համար: Իրենց արժեքավոր ծառայություններով թիմին օգնել են փորձագետներ Ֆրանցիսկո Մարջոլեյոն և Խուան Մանուել Սորենոն, ինչպես նաև մեր գործընկերներ Ռոբերտո Բասեթը (կրթական ոլորտի ավագ մասնագետ), Քրիստիան Աեդոն (կրթական ոլորտի ավագ տնտեսագետ), Բիկ Հոփերը (կրթական ոլորտի ավագ մասնագետ), Ջամիլ Սալմին (խորհրդատու), Մարիա Խոսե Լոմետորը (խորհրդատու) և Սուսաննա Կարախանյանը (ՈԱԱԿ-ի փոխտնօրեն):

Եվ ամենակարևորը, թիմը երախտապարտ է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներին՝ աջակցության և ներդրման համար, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնատար անձանց, ովքեր մեծահոգաբար և համբերությամբ մասնակցեցին ուսումնասիրությանը: Մասնակից բուհերի ցանկը ներկայացած է Հավելված 1-ում: Թիմը նաև իր շնորհակալությունն է հայտնում Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) (ANQA) աշխատակիցներին՝ հարցմանը աջակցելու համար:

Համառոտ ամփոփագիր

Կառավարման խնդիրները Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առանցքն են

Բոլոնիայի գործընթացին 2005 – ին միանալուց ի վեր՝ Հայաստանի կառավարությունն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները (ԲՈՒՀ), բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումներում նշանակալի առաջընթաց են արձանագրել: Ամենավերջին բարեփոխումները ներառել են. Եվրոպական համակարգին համահունչ՝ որակի ապահովման ազգային համակարգի զարգացումը, բարձրագույն կրթության առավել օբյեկտիվ և արդյունավետ ֆինանսավորման ռազմավարություն, և ազգային կրթության որակավորման շրջանակները: Չնայած բազմաթիվ դրական զարգացումներին, բարձրագույն կրթության կառավարման և ղեկավարման նկատմամբ հասարակական ընկալումը անբավարար է:

Ընթացիկ բարեփոխումներից առավելագույն օգուտներ քաղելու, և բարձրագույն կրթությունը հետագա զարգացնելու համար ՀՀ կառավարությանը՝ ԲՈՒՀ-երի հետ միասին, անհրաժեշտ է համալսարանի կառավարումը և ղեկավարումը դնել բարձրագույն կրթության ամբողջ համակարգի բարեփոխումների սրտում: Վերջին հետազոտությունը պարզել է, որ կառավարման կառուցվածքը և կարգավորող դաշտը հանդիսանում են համընդհանուր բարձրագույն կրթության համակարգի զարգացման առանցքը: Այդուհանդերձ, Հայաստանի կառավարությունը և ԲՈՒՀ-երը դեռ չեն դիտարկում կառավարման և ղեկավարման խնդիրները՝ որպես բարեփոխումների առաջնային հարց: Հաշվի առնելով բարձրագույն կրթության բարեփոխումներում կառավարման կարևորությունը, սույն ուսումնասիրությունը հետապնդում է երկու նպատակներ: Նախ, այն փորձում է ուրվագծել Հայաստանում բարձրագույն կրթության կառավարման կառուցվածք և դրա իրականացման ձևը, և մատնացույց անել, թե որտեղ է իրականությունը տարբերվում տեսությունից: Այնուհետև, այն նպատակ ունի կառավարման ոլորտի և դրա իրականացման հզորացմանն ուղղված քաղաքականության բարեփոխումների առաջարկություններ անել:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բարձրագույն կրթության համակարգը թերի է կատարում իր գործառույթը իրավական դաշտի անկատարության և ողջ համակարգում՝ անկախությունը և հաշվետվողականությունը արդյունավետորեն իրացնելու կարողության բացակայության պատճառով: Այսպիսով, հույժ անհրաժեշտ է ձևավորել կառավարման կայացած շրջանակ, ինչպես նաև ամրապնդել համալսարանների և համակարգերի ղեկավարների առաջնորդության և կառավարման հմտությունները:

Ղեկավարման ոլորտի բարեփոխումների մասով ներկայացված առաջարկությունները վերաբերում են չորս բնագավառների՝ կարգավորման դաշտ, որակի ապահովում, ֆինանսավորում և կարողությունների զարգացում:

Առաջարկություն 1 – Վերանայել կարգավորող դաշտը

- ***Վերասահմանել կառավարության և ԲՈՒՀ-երի դերերը:*** Բարձրագույն կրթությունը բարելավելու համար Հայաստանը պետք է անհապաղ վերանայի գործող օրենսդրությանը և *տրամաբանական կառավարման մոդելի* համար մշակի մի կուռ կարգավորող դաշտ, որով կվերասահմանվի պետության և բուհերի դերերը: Շատ կարևոր է, որ շահակիցների ծավալուն խորհրդակցության միջոցով կառավարությունն ու բուհերը համատեղ ուսումնասիրեն և գտնեն Հայաստանին հարմար մի հավասարակշռություն՝ կառավարության և բուհերի դերերի և ինքնավարության ու հաշվետվողականություն միջև:
- ***Մշակել կարգավորման մի կուռ դաշտ:*** Փոխադարձ համաձայնեցված կառավարման կառուցվածքի հիման վրա, կառավարությունը պետք է վերանայի բարձրագույն կրթության մասին գործող օրենսդրությունը և մշակի մի միասնական և կուռ կառավարման դաշտ: Այն պետք է ենթադրի նաև մասնավոր բուհերի ավելի ակտիվ և մրցակցային մասնակցությունը խթանելու պայմաններ:

Առաջարկություն 2 – Ստեղծել մասնագիտական կրթության բազմատարր, համապարփակ համակարգ

- **Անցում, մի կողմից՝ դեպի համալսարանական և ոչ-համալսարանական մասնագիտական կրթության, և մյուս կողմից՝ մասնագիտական կրթության և գիտահետազոտության ինտեգրմանը:** Համակարգային թերությունն է պատճառը, որ համալսարանական և ոչ-համալսարանական մասնագիտական կրթությունը (այսինքն, մասնագիտական և արհեստագործական ուսումնարանները), և բարձրագույն կրթությունն ու գիտական հետազոտությունը համակցված չեն: Մասնագիտական կրթության միասնական համակարգ ձևավորելու համար կառավարությանը խորհուրդ է տրվում ստեղծել աշխատանքային խումբ և մտածել, թե ինչպես մշակել բազմատարր, համապարփակ մասնագիտական կրթության ցանց՝ նպատակ ունենալով միջնաժամկետ հեռանկարում վերացնել ներկայիս մասնատվածությունը:

Առաջարկություն 3 – Ուժեղացնել որակի ապահովման համակարգը

- **Աջակցել Որակի ապահովման գործակալությանը:** Շատ կարևոր է, որ կառավարությունն ու ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) շարունակեն մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) համար ստեղծել բարենպաստ միջավայր, որով կաջակցեն Հայաստանի ազգային որակի ապահովման համակարգը ամրապնդմանը, որպես միջազգայնորեն ճանաչված գործակալություն:
- **Մշակել որակի ապահովման նոր մոդել:** Որակի ապահովման ձևն ու պատասխանատվությունը պետք է տեղափոխել ԿԳՆ-ից կրթական և ուսումնական ծրագրերի պետական խիստ չափորոշիչներ և դասավանդման գործընթացներ սահմանելուց՝ դեպի ՈԱԱԿ-ի կողմից որակի չափանիշների և ուսման արդյունքների սահմանումը: Կառավարությունը պետք է թույլ տա ուսումնական հաստատություններին բարեփոխել իրենց կրթական ծրագրերը՝ դրանք ավելի պահանջված, ճկուն և արդյունավետ դարձնելու համար:
- **Մշակել մոնիտորինգի և գնահատման մեխանիզմ:** ԿԳՆ-ը անհրաժեշտ է մշակել մոնիտորինգի և գնահատման մեխանիզմ, այդ թվում, հավատարմագրման, համալսարանի վարկանիշի և ֆինանսավորման հետ կապված հիմնական կատարողականի ցուցանիշներ: .
Հիմնել աշխատաշուկայի դիտակետեր: Ցանկալի կլիներ ստեղծել ինչպես ազգային մակարդակով աշխատաշուկայի դիտակետեր, այնպես էլ ուսումնական հաստատությունների հենքի վրա հիմնված շրջանավարտների զբաղվածությանը հետևող հետազոտություններ՝ դրանով ամրապնդելով աշխատաշուկայի ու բարձրագույն կրթության միջև կապը և բարելավելով բարձրագույն կրթական ծրագրերի որակն ու համապատասխանությունը:

Առաջարկություն 4 – Դիվերսիֆիկացնել բարձրագույն կրթության ֆինանսավորումը

- *Ամրապնդել Բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումները.* Կառավարությունն արդեն նախաձեռնել է բարձրագույն կրթության ֆինանսավորման համապարփակ բարեփոխումներ և պետք է շարունակի այդ գործընթացը: Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր մոդելը պետք է ապահովի ավելի մեծ կայունություն և խթանի որակի բարելավումը և նորարարությանը:
- *Մասնավոր ֆինանսավորման ներգրավում.* Ֆինանսավորման համակարգն արդիականացնելիս՝ ոլորտին, հավանաբար, անհրաժեշտ կլինեն և պետական, և մասնավոր միջոցների ներգրավում՝ արմատական բարելավումներին նոր թափ հաղորդելու համար:

Առաջարկություն 5 – Հզորացնել համակարգը և ինստիտուցիոնալ կարողությունները

- *Հզորացնել քաղաքականություն մշակողների կարողությունները.* Նոր կառավարման համակարգն իրականացնելու համար ԿԳՆ-ին անհրաժեշտ է ամրապնդել իր դերը՝ քաղաքականության մշակման ու մոնիտորինգի և վերահսկողության հարցերում, որպեսզի առաջնորդի բուհերին՝ հասնելու բարձրագույն կրթության և գիտության ազգային նպատակներին:
- *Ամրապնդել բուհերի կարողությունները.* Կառավարության, ԿԳՆ և ՈԱԱԿ –ի տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ յուրաքանչյուր ԲՈՒՀի անհրաժեշտ է շարունակել հզորացնել սեփական կարողությունները՝ արդյունավետ ինքնավարություն իրականացնելու և իրենց կողմից մատուցվող ծառայությունների համար հաշվետու լինելու նպատակով:

Զեկույցը բաղկացած է չորս բաժիններից: Ներածություն բաժնում ներկայացվում է բարձրագույն կրթության բարեփոխումների ընդհանուր պատկերը Հայաստանում և այս ուսումնասիրության հիմնավորումը: Բաժին II -ը ներկայացնում է Հայաստանի բարձրագույն կրթության ամբողջ համակարգի կառավարման կառուցվածքի ուրվագիծը: Այն անդրադառնում է բարձրագույն կրթության ոլորտում կառավարության տեսլականին և բարձրագույն կրթության ղեկավարության քաղաքականություն մշակելու և իրականացնելու կարողություններին, բարձրագույն կրթությունը կանոնակարգող օրենսդրական դաշտին, որակի ապահովման մեխանիզմներին և բարձրագույն կրթության ֆինանսավորմանը: Բաժին III-ում ներկայացվում է այն, թե ինչպես են կանոնակարգվում և կիրառվում ինքնավարությունն ու հաշվետվողականությունը՝ ինստիտուցիոնալ մակարդակով: Այստեղ ուսումնասիրվում են ինքնավարության չորս ասպեկտները, որոնք են՝ կազմակերպչական, կրթական, մարդկային ռեսուրսներ և ֆինանսավորում և ինստիտուցիոնալ հաշվետվողականություն՝ բուհի արժեքային համակարգի

առումով, ֆինանսական ամբողջականության, ուսանողների մասնակցության և կառավարումն իրականացնելու կարողություններ: Բաժին IV–ը եզրափակում է հիմնական արդյունքները և տրամադրում քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ:

I. Ներածություն

1. Բոլոնիայի գործընթացին 2005 – ին միանալուց ի վեր Հայաստանի կառավարությունն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները նշանակալի առաջընթաց են արձանագրել բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումներում: ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) 2003 թ. մշակել է Բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությանը, որի արդյունքում 2005 թ. Հայաստանը միացել է Բոլոնիայի գործընթացին - Բարձրագույն կրթության բարեփոխումների համաեվրոպական գործընթացին, Bologna Process— /European-wide higher education reform/:¹ Կրթություն զարգացման 2008-2015 թթ. ռազմավարությունը մշակելուց հետո բարձրագույն կրթության հաստատությունները (ԲՈՒՀ-երը) սկսեցին զանազան բարեփոխումներ ներդնել, ներառյալ՝ երկաստիճան համակարգը, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում համատեղելի՝ /Diploma Supplements/ դիպլոմի հավելվածը և Կրեդիտների փոխանցման և կուտակային Եվրոպական համակարգը /Credit Transfer and Accumulation System/ (ECTS): Վերջին ժամանակներիս ուշագրավ զարգացումներից էր՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հիմնադրումը² և որակի ապահովման բարեփոխումների հետագա իրականացումը: Կառավարությունը 2011 թ. նաև ընդունեց *Ազգային կրթության որակավորման շրջանակը /National Education Qualifications Framework/*:³ Բարեփոխումների այս առաջնությամբ արտացոլված է վերջին Բոլոնիայի Գույքագրման ցանկում /Bologna Stocktaking/, թեև դեռ կան բնագավառներ, որոնք հետագա առաջընթացի կարիք ունեն: Բացի Բոլոնիայի բարեփոխումների իրականացումից, բարձրագույն կրթություն հասանելիությունը նույնպես բարելավվել է. բուհերում համախառն ընդունելությունը աճել է 2001 թ. 19.6 տոկոսից մինչև 28.6 տոկոս՝ 2008 թ.-ին, որը համադրելի է Եվրոպա և Կենտրոնական Ասիա (ECA) տարածաշրջանի տնտեսական նույն մակարդակով երկրների ցուցանիշների հետ: ⁴ Կառավարությունը 2011 թ.-ին

¹ Հայաստանը վավերացրել է Լիսաբոնի կոնվենցիան բարձրագույն կրթության ոլորտում որակավորումների ճանաչման վերաբերյալ՝ ստորագրված 11 ապրիլի 1997 թ., որը համարվում է Բոլոնիայի գործընթացի իրավական շրջանակ:

² 2008 թ. Նոյեմբերի 7 –ի ՀՀ Կառավարության թիվ 1486 - Ն որոշումը,

³ Մասնագիտական կրթության որակավորման աստիճանները հետևյալն են՝ Բակալավր (Մակարդակ 6), Մագիստրոս (մակարդակ 7), և Ասպիրանտուրա (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան) (Մակարդակ 8) (<http://studyinarmenia.org/neqf>).

⁴ Վերցված է՝ Համաշխարհային բանկի EdStats տվ.բազայից: Մասնագիտական կրթ-ն ուսանողների համախառն քանակը (ISCED 5 և 6) Հայաստանում շատ բարձր է և գնահատվում է՝ 51.5 տոկոս, մոտ այնքան, որքան ECA զարգացող երկրների միջին մակարդակը (55.6 տոկ.) և ավելի բարձր, քան ցածր և բարձր միջին եկամուտով երկրների միջինը (համապատասխանաբար 18.2 և 34.7 տոկոս). Դիտ. Տվյալների սկզբնաղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ - ի վիճակագրության ինստիտուտը /UIS/ տարանջատում էր համախառն ընդունելության մակարդակը՝ ըստ ISCED 5A, 5B և 6-ի, սակայն այժմ դա չի անում:

ընդունել է նաև *Բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը*, որի հիման վրա կառավարությունը նախատեսում է տարբեր տեսակի բուհական և ուսանողական ֆինանսավորման ձևեր կիրառել:

2. **Չնայած այս բարեփոխումներին, բարձրագույն կրթության կառավարման և վարչարարության նկատմամբ հասարակական ընկալումը անբավարար է:** Ըստ 2007 թ. <<Թրանսփերենսի ինթերնեշնլ Արմենիա>>-յի կողմից կոռուպցիայի հետազոտության, հարցվածների մեծամասնությունը (20,5 տոկոս), կրթությունը համարում են «ամենակոռումպացվածը ոլորտը», որին հաջորդում է դատական (15.9%) և առողջապահական (11.7 տոկոս) ոլորտները:⁵ Կոռուպցիան տարածված է ողջ համակարգում, սակայն գերակշռում է բարձրագույն կրթության մեջ: Ըստ վերջին՝ 2010թ.-ի հետազոտության,⁶ ուսանողները նշել են, որ կոռուպցիայի վտանգը ավելի մեծ է ընդունելության քննությունների (38 տոկոս), ամբողջ ուսումնական տարվա (32 տոկոս), և ավարտական քննությունների (12 տոկոս) ընթացքում:

3. **Բարձրագույն կրթության կառավարման և վարչարարության նկատմամբ հասարակական ընկալման անբավարարության պատճառներն առաջին հերթին համակարգային առգասիք են:** Կոռուպցիայի հիմնական պատճառները հետևյալն են. համակարգային (39 տոկոս), ուսանողների անձնական ծուլություն (24 տոկոս), դասախոսների անբավարար տնտեսական պայմաններ (14 տոկոս), և ուսանողների անտեղյակությունը իրենց իրավունքներից (8 տոկոս): Հարցվողների մոտ երկու երրորդը կարծում էր, որ պետությունը կոռուպցիայի դեմ պայքարելու հարցում կամ փոքր արհեստական փոփոխություններ է կատարում (36 տոկոս), կամ ընդհանրապես չի պայքարում դրա դեմ (27 տոկոս): Եվս 18 տոկոսը կարծում էր, որ պետությունը պայքարում է, բայց առանց տեսանելի արդյունքի: Շատ ուսանողներ չեն հավատում, որ նրանք, ովքեր ներգրավված են կոռուպցիայի մեջ՝ կպատժվեն, քանի որ հնարավոր չէ որևէ արդյունավետ միջոց ձեռնարկել (42 տոկոս), կամ այն պատճառով, որ կոռուպցիան համակարգային երևույթ է (33 տոկոս):

4. **Վերջին ուսումնասիրությունները պարզել են, որ կառավարման կառուցվածքը և կարգավորող դաշտը բարձրագույն կրթության ընդհանուր համակարգի զարգացման առանցքն են:**⁷ Ազգային մակարդակում. ուժեղ կառավարման համակարգն ու կարգավորող դաշտի բարենպաստ պայմանները կարող են օգնել բուհերին արդյունավետ կերպով իրականացնել իրենց իրավունքները (ինքնավարություն) և պարտականությունները (հաշվետվողականություն) և շարքում խթանել նորարարական վարքագծը: Ինստիտուցիոնալ մակարդակում. լավ

⁵ Տարածաշրջանային զարգացման կառավարման կենտրոն, <<Թրանսփերենսի Ինթերնեշնլ Հայաստան>>, 2007, Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում: 2007 հեռախոսային հարցում, Երևան.

⁶ ԵԱՀԿ, Երևանի գրասենյակ, 2010, ՀՀ բուհական համակարգում կոռուպցիայի ընկալումը ուսանողների մոտ:

⁷ Fielden, John, 2008, *Global Trends in University governance*, World Bank Education Working Paper Series No. 9.

կառավարումն ու վարչարարությունը կարող են օգնել բուհերին "Էթիկական որոշումներ կայացնել և մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ ապահովել իրենց առաքելությունը արդյունավետ իրականացնելու, կրթական և այլ նպատակների համար".⁸ Բուհերի ինքնավարությունը պետք է համագոր լինի հաշվետվողականություն հետ՝ "պատասխանել ուսանողներին և հասարակությանը, թե ինչ է արվել ուսանողի ուսուցման հաջողությունը և ընդհանուր բուհական ցուցանիշներն ապահովելու համար: Հաշվետվողականությունն այն ապացույցն է, որ բուհում առկա ռեսուրսները ծառայեցվում են ենթադրվող կրթական նպատակներին հասնելու համար":⁹ (տես՝ Ներդիր 1. Կառավարման և վարչարարության Հայեցակարգը):

Ներդիր 1

Կառավարման և վարչարարության հայեցակարգը

Բարձրագույն կրթության "կառավարման" և "վարչարարության" հիմնական հայեցակարգը կարելի է սահմանվել հետևյալ կերպ.

Կառավարումը՝ «լիազորությունների ֆորմալ և ոչ ֆորմալ իրականացումն է»՝ ըստ օրենքի, քաղաքականության և կանոնների, որոնցով սահմանվում են զանազան դերակատարների իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ նրանց միջև փոխազդեցության կանոնները, որոնք օգնում են հասնելու բուհի կրթական նպատակներին:^{1/}

Վարչարարությունը, մյուս կողմից, վերաբերում է «բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից հետապնդվող մի շարք նպատակների՝ ըստ սահմանված կարգի, իրականացմանը »:^{2/}

Եթե *կառավարումը* պատասխանում է այն հանցերին, թե "Ով է պատասխանատուն, և որոնք են զանազան դերակատարների կողմից գործադիր որոշումներ կայացնելու լեգիտիմության աղբյուրները", ապա *վարչարարությունը* պատասխանում է այն "հարցերին, թե ինչպես են կիրառվում կանոնները և մտահոգված է ներքին և արտաքին շահակիցներին մատուցվող ծառայությունների արդյունավետությամբ, արդարողականությամբ և որակով":^{3/}

^{1/} Fried, Jochen, 2006, "Higher education governance in Europe: autonomy, ownership and accountability –a review of the literature", in Kohler, J. & Huber, J. eds., 2006, *Higher Education Governance between Democratic Culture, Academic Aspirations and Market Forces*, Council of Europe. Eurydice—the information network on education in Europe—also refers to this definition in Eurydice, 2008, *Higher Education Governance in Europe: Policies, Structures, Funding and Academic Staff*, European Commission.

^{2/3/} Eurydice, 2008, *Higher Education Governance in Europe: Policies, Structures, Funding and Academic Staff*, European Commission.

5. Ընթացիկ բարեփոխումներից առավելագույն օգուտներ քաղելու և բարձրագույն կրթությունը հետագա զարգացնելու համար ՀՀ կառավարությանը՝

⁸ ՈԱԱԿ, 2011 թ., ՈԱԱԿ Հավատարմագրման ձեռնարկ.

⁹ Վերցված է՝ Easton, Judith S., 2009, "Accountability: an "old issue in a new era", *Inside Accreditation with the President of CHEA*, Vol. 5, No. 4, June 2, 2009 (http://www.chea.org/ia/IA_2009.06.02.html).

բուհերի հետ միասին, անհրաժեշտ է համալսարանի կառավարումը և ղեկավարումը դնել բարձրագույն կրթության ամբողջ համակարգի բարեփոխումների սրտում: Հաշվի առնելով բարձրագույն կրթության բարեփոխումներում կառավարման կարևորությունը, սույն ուսումնասիրությունը հետապնդում է երկու նպատակներ: Նախ, այն փորձում է ուրվագծել Հայաստանում բարձրագույն կրթության կառավարման կառուցվածքը և դրա իրականացման ձևը, և մատնացույց անել, թե որտեղ է իրականությունը տարբերվում տեսությունից: Այնուհետև, այն նպատակ ունի կառավարման ոլորտի և դրա իրականացման հզորացմանն ուղղված քաղաքականության բարեփոխումների առաջարկություններ անել:

6. **Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բարձրագույն կրթության համակարգը թերի է կատարում իր գործառույթը իրավական դաշտի անկատարության և ողջ համակարգում՝ անկախությունը և հաշվետվողականությունը արդյունավետորեն իրացնելու կարողության բացակայության պատճառով:** Առաջին հայացքից թվում է, թե Հայաստանի բուհերը զգալի ինքնավարություն ունեն: Այդուհանդերձ, բարձրագույն կրթությունը կանոնակարգող օրենսդրության առավել խորը հետազոտությունը պարզում է, որ չկայացած իրավական դաշտը՝ մի շարք իրարամերժ օրենքներով և կանոնակարգերով, բուհերին ինստիտուցիոնալ կառավարման մասին խառը ու հակասական ազդակներ է ուղարկում: Մի կողմից, բարձրագույն կրթության համակարգում չկա այն իրավական դաշտը, որը հստակորեն կսահմաներ կառավարության և բուհերի համապատասխան դերերը համալսարանի կառավարման շրջանակներում, և ներկայացներ բուհերի ինքնավարության և հաշվետվողականության ընդհանուր տեսլականը: Մյուս կողմից, բուհերի մեծամասնությունը չունեն իրենց լիիրավ ինքնավարությունն արդյունավետորեն և հետևողականորեն իրականացնելու համարժեք կարողություններ ու անկարող են հաշվետու լինել իրենց կատարողական ցուցանիշների համար: Հետևաբար, **անհրաժեշտ է հրատապորեն մշակել** կառավարման մի հզոր համակարգ, ինչպես նաև ուժեղացնել համալսարանների և համակարգի այն ղեկավարների կառավարման և վարչարարական հմտությունները, ովքեր պատասխանատու են լինելու կայուն կերպով ապահովել ցանկացած բարեփոխման հաջողությունը:

7. **Մեթոդաբանություն.** Սույն ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է *Բուհերի կառավարման հարցաթերթիկի* հիման վրա, որը մշակվել է Համաշխարհային բանկի Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրների (MENA) տարածաշրջանի կողմից և ՀՄՀԼԿ-ի *SABER (Համակարգային մոտեցում՝ ավելի լավ կրթական արդյունքների ապահովման համար)* - Մասնագիտական կրթության կառավարումը՝ հիման վրա, որը մշակված է Համաշխարհային բանկի *Կրթության Համար Մարդկային Զարգացման Ցանց*-ի կողմից (մանրամասն մեթոդաբանությունը տես՝ Հավելված 1): Բացի համակարգային մակարդակի վերլուծությունից, խոր ուսումնասիրություններ են կատարվել որպես նմուշ ընտրված

19-ից՝ 10-ը պետական համալսարաններում, որպես եզակի նմուշ՝ չորս միջպետական համալսարաններից՝ երեքում, 39-ից՝ չորս հայտնի մասնավոր համալսարաններում, և 81-ից՝ երեք հանրային քոլեջներում:

8. **Կառուցվածքը.** Հաջորդ երկու բաժիններում գնահատվում է Հայաստանի բարձրագույն կրթության կառավարման վիճակը՝ ըստ SABER-ի ութ քաղաքականության նպատակների (թեև ոչ նույն հաջորդականությամբ). (i) մասնագիտական կրթության հստակ տեսլականը, (ii) համապատասխան կարգավորող համակարգը, (iii) մասնագիտական կրթության ղեկավարության կարողությունները (ՄԿՂ), (iv) ղեկավարության, կառավարման և կազմակերպչական ինքնավարությունը, (v) բավարար ինստիտուցիոնալ ինքնավարության, (vi) կատարողական ցուցանիշների և արդարության վրա հիմնված ֆինանսավորում, (vii) որակի և համապատասխանության ստուգումներ, (viii) հաշվետվողականության չափորոշիչներ: Բաժին II -ը ներկայացնում է Հայաստանի բարձրագույն կրթության ամբողջ համակարգի կառավարման կառուցվածքի որվագիծի: Այն անդրադառնում է բարձրագույն կրթության ոլորտում կառավարության տեսլականին և բարձրագույն կրթության ղեկավարության քաղաքականություն մշակելու և իրականացնելու կարողություններին, բարձրագույն կրթությունը կանոնակարգող օրենսդրական դաշտին, որակի ապահովման մեխանիզմներին, և բարձրագույն կրթության ֆինանսավորմանը: Բաժին III-ում ներկայացված է այն, թե ինչպես են կանոնակարգվում և իրականում կիրառվում ինքնավարությունն ու հաշվետվողականությունը՝ ինստիտուցիոնալ մակարդակով: Այստեղ ուսումնասիրվում են ինքնավարության չորս ասպեկտները, որոնք են՝ կազմակերպչական, գիտական, մարդկային ռեսուրսներ, և ֆինանսավորում, և ինստիտուցիոնալ հաշվետվողականություն՝ բուհի արժեքային համակարգ, ֆինանսական ամբողջականության, ուսանողների մասնակցության առումով, և կառավարումն իրականացնելու կարողությունները: Բաժին IV-ը եզրափակում է հիմնական արդյունքները և տրամադրվում են քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ:

II. Ամբողջ համակարգի կառավարման կառուցվածքը

9. Այս բաժինը ներկայացնում է բարձրագույն կրթության ամբողջ համակարգի կառավարման կառուցվածք: Այն դիտարկում է բարձրագույն կրթության կառավարման տեսլականը, բարձրագույն կրթության ղեկավարության քաղաքականություն մշակելու և իրականացնելու կարողությունները, բարձրագույն կրթությունը կանոնակարգող օրենսդրական դաշտը, որակի ապահովման մեխանիզմները և բարձրագույն կրթության ֆինանսավորումը:

2.1 Բարձրագույն կրթության տեսլականը

10. Բարձրագույն կրթության նկատմամբ Հայաստանի կառավարության տեսլականը հաստատված է պաշտոնական փաստաթղթերում, ըստ որի՝ բարձրագույն կրթության համակարգը և հաստատությունները պիտի լինեն միջազգայնորեն մրցունակ, հավասար և համատեղելի բարձրագույն կրթության բարեփոխումների համակարգի օրակարգին՝ Բոլոնիայի գործընթացին: Բարձրագույն կրթության առաքելությունները և սկզբունքները սահմանված են հետևյալ երկու փաստաթղթերում. առաջինը՝ Կրթության մասին Օրենքի 5-րդ հոդվածով, 14.04.1999 թ.; և բարձրագույն և հետ-բուհական մասնագիտական կրթության մասին Օրենքի /այսուհետև՝ Բարձրագույն կրթության մասին Օրենքի/ 4-րդ հոդվածով, 14.12.2004թ., սահմանում է բարձրագույն կրթական համակարգի հաստատությունների «պետական քաղաքականության սկզբունքները», այդ թվում՝

- ապահովել մարդու և քաղաքացիների բարձրագույն կրթություն ստանալու իրավունքները;
- խթանել մրցունակությունն ու թափանցիկությունը;
- ապահովել բարձրագույն կրթության համակարգի որակավորումների համատեղելիությունը և դիպլոմների ճանաչումը Եվրոպական և այլ պետություններում;
- խթանել ուսանողների միջազգային շարժունակությունը;
- խթանել և զարգացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների ազատությունը և ինքնավարությանը և
- կազմակերպել մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև հայագիտության զարգացման միջոցառումներ հայկական ծագում օտարերկրյա քաղաքացիների համար.

Նմանապես, *Կրթության զարգացման 2011-2015թ.թ. պետական ծրագիրը*¹⁰ սահմանում է բարձրագույն կրթության զարգացման հետևյալ հիմնական նպատակները և ռազմավարական ուղղությունները.

- ներդնել Եվրոպական որակավորման շրջանակին համահունչ՝ ազգային որակավորման շրջանակ;
- ստեղծել որակի ապահովման ազգային համակարգ և հզորացնել այն;
- ներդնել բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ և կայուն համակարգ;
- ապահովել բարձրագույն կրթության վկայականների ճանաչումն ու համատեղելիությունը;
- խթանել ուսանողների շարժունակությանը և Հայաստանի կրթական համակարգի գրավչությանը, և
- նպաստել բուհերի և գործատուների (աշխատաշուկա) միջև փոխգործակցությունը և սովորողներին տալ մասնագիտական ուղղորդում և լուծել զբաղվածության խնդիրները:

2.2 Բարձրագույն կրթության ղեկավարության կարողությունները

11. Թեև Բոլոնիայի գործընթացին միանալուց ի վեր բարձրագույն կրթության ղեկավարումը հզորացել է, այն դեռ կարող է էլ ավելի ակտիվացնել իր քաղաքականության կայացման և իրականացման կարողությունները: ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) գործադիր մարմինն է, որը մշակում և իրականացնում է գիտության ու կրթության ոլորտների պետական քաղաքականությունը՝ մարզային և քաղաքային իշխանությունների հետ համագործակցությամբ: Նախարարության բուհական և հետ-բուհական մասնագիտական կրթության վարչությունը¹¹ վերահսկում է պետական բուհերը՝ բացառությամբ մի քանի մասնագիտացված բուհերի, որոնք գտնվում են տարբեր նախարարությունների իրավասության տակ¹² և բոլոր մասնավոր բուհերը: Վարչությունն առաջնորդում է վերոհիշյալ բարձրագույն կրթության պետական

¹⁰ *Կրթության զարգացման 2011-2015 թթ պետական ծրագրի հաստատման մասին Օրենքը*, 23.06. 2011.: Թեև Պետական ծրագիրը ըստ իրավական կարգավիճակի՝ օրենք է, այն միայն նկարագրում է կրթության ոլորտի ընթացիկ իրավիճակը՝ առանց իրականացման ժամանակացույցի, որը սահմանափակում է դրա իրականացվելիությունը:

¹¹ Վերջերս Կրթության պետական վերահսկողության մասին օրենքում առաջակվող փոփոխություններով նախատեսվում է բուհերը դնել ԿԳ –ի Կրթության պետական վերահսկողության վարչության հսկողության տակ: Վերջնական որոշում դեռ չի կայացվել:

¹² Չորս պետական բուհեր գտնվում են Պաշտպանության նախարարության, Ոստիկանության, Արտակարգ իրավիճակների նախարարության և Մայր Աթոռ սբ Էջմիածնի (Հայկական եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնն է) իրավասության տակ:

քաղաքականության և ծրագրերի իրականացման գործընթացը, սակայն այն չունի արդյունավետ մոնիտորինգի և վերահսկողական մեխանիզմներ: Տվյալներ հավաքագրելու, վերլուծելու ու օգնելու բուհերին՝ բարելավել ցուցանիշները, և բարձրագույն կրթության ու աշխատաշուկայի միջև կապ հաստատելու կարողությունները թույլ են:

12. **Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի թույլ կողմերից է այն, որ գիտական, հետազոտական և ստեղծագործական գործընթացները հիմնականում առանձնացված են համալսարաններից:** Որպես խորհրդային ժառանգություն, Հայաստանում բարձրագույն կրթությունը և գիտությունը բաժանված են համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) ամենաբարձր պետական գիտական ինքնակառավարվող կազմակերպությունն է, որը միավորում է ավելի քան 34 գիտահետազոտական ինստիտուտներ և այլ կազմակերպություններ: Ենթադրվում է, որ Ակադեմիան խթանում և իրականացնում է հիմնարար և կիրառական հետազոտություններ տարբեր գիտական ոլորտներում, ինչպես նաև համակարգում է հանրապետության ողջ տարածքում իրականացվող գիտական հետազոտությունները:¹³ Թեև Հայաստանում գիտության որոտը բարելավելու նպատակով ՀՀ ԿԳՆ կազմում 2008թ. ստեղծված Գիտության պետական կոմիտեն (ԳՊԿ) պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է գիտության ոլորտում պետական քաղաքականությունը,¹⁴ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին 2011 թ. ընդունված նոր օրենքով ԳԱԱ -ին տրվել է ԿԳՆ-ից ավելի ինքնուրույն իրավական կարգավիճակ:¹⁵ Բարձրագույն կրթության և գիտության նման տարանջատվածության պայմաններում բուհերը չեն կարողացել ամրապնդել իրենց հետազոտական գործառույթները:

2.3 Կարգավորող դաշտ

¹³ Իրականում ԳԱԱ – ն կանգնած է զգալի դժվարությունների առաջ և բուհերի համեմատ ցածր աշխատավարձի պատճառով դժվարանում է լավ գիտնականներ ներգրավել: Վերահսկիչ պալատի կողմից ԳԱԱ–ում ստուգումների հիման վրա կազմված հաշվետվությունը ցույց է տալիս, որ 2009թ. կատարված 46 գիտական հայտնագործությունները ոչ մի տեղ չեն կիրառվել: Նույն փաստաթղթով նաև կառավարությանը առաջարկ էր արվում՝ օպտիմալիզացնել գիտահետազոտական ինստիտուտների ցանցը: (<http://coc.am/ShowReportArm.aspx?ReportID=202>).

¹⁴ http://scs.am/index.php?page=kanon&hl=en_US.

¹⁵ Ըստ նոր օրենքի, ԳԱԱ կարող է հանդես գալ որպես կառավարության լիազորված մարմին, որն արգելում է ԿԳՆ –ին միջամտել նրա կառավարման գործերին չնայած նրան, որ ԳԱԱ – ի և նրա ինստիտուտների իրավաբանական կարգավիճակը մնում է որպես ՊՈԱԿ: Ավելի կոնկրետ. (i) ԳԱԱ գտնվում է կառավարության ուղղակի ենթակայության տակ, այսինքն՝ ԿԳՆ – ի իրավասության տակ չէ; (ii) ԳԱԱ հախազահը կարող է մասնակցել կառավարության նիստերին; (iii) ԳԱԱ գիտության հարցերով կառավարության պաշտոնական խորհրդատուն է և նրա առաջարկությունները ենթակա են կառավարության և այլ պետական մարմինների քննարկմանը; և (iv) ԳԱԱ կարող է ներկայացնել գիտական գործունեությանն առնչվող նորամատիվային ակտերի նախագծեր:

13. Բարձրագույն կրթության մասին 2004 – թ. և Կրթության մասին 1999 թ. ՀՀ օրենքները մանրամասն սահմանում են բարձրագույն կրթության կառավարման ընդհանուր շրջանակը, սակայն որոշ անորոշությամբ՝ հոգուտ պետության վերահսկողական դերի: Մասնավորապես, ԲԿՕ–ը մանրամասն սահմանում է պետության դերի, ու բուհերի, ակադեմիաների և ուսանողների խնդիրների շրջանակը: Այն սահմանում է բարձրագույն կրթության պետական քաղաքականության սկզբունքները, որոնց թվում են նաև հասանելիության հավասարությունը, մրցունակությունը, թափանցիկությունը, գիտական աստիճանների համատեղելիությունը և դիպլոմների ճանաչումը, ուսանողների շարժունակությունը, ակադեմիական ազատությունը և բուհերի ինքնավարությունը (հոդված 4.): Այն, թիվս այլոց, սահմանում է բարձրագույն կրթության քաղաքականության որոշման (հոդված 5), որակի ապահովման (հոդված 22.), Բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատության (հոդված 6.) և կառավարման ու վարչական մարմինների կառուցվածքի (հոդված 15.) մեջ պետության դերերն ու լիազորությունները: Նման մանրամասն օրենքը՝ որոշ անորոշություններով և անհետևողականությամբ, հնարավորություն է տալիս ՀՀ կառավարությանը վերահսկել բուհերին, ինչպես նաև խոչնդոտել բուհերին արդյունավետ ինքնավարություն իրականացնել, ինչպես մանրամասն նկարագրվում է ստորև՝ Բաժին III -ում:

14. 2002 թ.-ից պետական ԲՈՒՀ-երը ենթարկվում են Պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) 2001 թ. ընդունած օրենքին, որը հակասում է կրթությանը վերաբերող օրենքներին և ժխտում է ինքնավարությունը և ինքնակառավարման սկզբունքները: Հաջորդելով Կրթություն մասին օրենքին (Մաս 5, հոդված 27), 2002-2003 թթ.-ին բոլոր պետական ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ Բուհերի, իրավական կարգավիճակը պետական հաստատությունները վերածվել է ՊՈԱԿ-ի: Ի լրումն կրթության մասին օրենքների իրավական կարգավիճակի նման փոփոխությամբ պետական բուհերը մտան ՊՈԱԿ-ի մասին օրենքի տիրույթ: ¹⁶ Քանի որ ՊՈԱԿ-ի օրենքը չի վերաբերվում բացառապես ուսումնական հաստատություններին, այնտեղ հաշվի չեն առնված Բուհերի կառավարման, ինքնավարության և ակադեմիական ազատության հարցերը, որոնք երաշխավորված են կրթության մասին օրենքներով (Օրենքի համապատասխան հոդվածները տես՝ Ներդիր 2-ում): Նշված օրենքներում ամենախնդրահարույց հակասությունն այն է, որ ըստ կրթության օրենքների՝ բուհերը առանձին իրավաբանական անձիք են և ոչ ԿԳՆ-ը, և ոչ էլ հիմնադիրը (կառավարությունը) չեն կարող խոչընդոտել նրանց ինքնավարությանը, մինչդեռ, համաձայն ՊՈԱԿ-ի

¹⁶ 23.10.2001թ. ընդունված այս օրենքը հապապատասխանեցված էր 1995 թ. ընդունված Սահմանադրությանը, սակայն հակասում է 2005թ. Սահմանադրական փոփոխություններին, ըստ որի՝ “պետական մարմինները և պաշտոնատար անձիք իրավասու են իրականացնել միայն Սահմանադրությամբ կամ Օրենքներով լիազորած գործառույթներ” (Հոդված 5, մաս 2):

օրենքի՝ հիմնադիրը կարող է ՊՈԱԿ – ի գործունեության ու կառավարման վերաբերյալ կայացնել ցանկացած վերջնական որոշում: (Մաս 1., հոդված 13.):

15. **Գործող օրենքներն ու կանոնակարգերը հախտոն կերպով են կարգավորում Բարձրագույն կրթության կառավարման դաշտը:** Ինչպես ՊՈԱԿ–ի մասին օրենքը, այնպես էլ մյուս օրենքներն ու իրավական ակտերը հակասում են կրթությանը վերաբերող օրենքներին: Պետական կառավարման մարմինների մասին 2001 թ. օրենքը (ՊԿՄ), որը սահմանում է գրեթե բոլոր պետական մարմինների, պետական Բուհեր–ը ներառյալ, հիմնական գործունեության շրջանակները, կառավարությանը՝ որպես պետական բուհերի հիմնադրի, լիազորում է պետական բուհերի վերաբերյալ կայացնել ցանկացած որոշում:¹⁷ Բացի այդ, 2002 թվականին ընդունված ԿԳՆ–ի կանոնադրությամբ պետական Բուհերն ընկնում են վերջինիս ենթակայության տակ, որն այլևս համահունչ չէ Սահմանադրությանը և ԲԿ մասին օրենքին: Վերոհիշյալ օրենքներում տեղ գտած անհամապատասխանությաններն ու հակասությունները մանրամասն ներկայացվում են Բաժին III – ում:

16. **Ելնելով օրենսդրությունից, պետական բուհերի կառավարման հայկական մոդելը կարելի է դասակարգել կիսաինքնավարության մոդելի շարքին:** Բարձրագույն կրթության մասին օրենքի առանցքային տարրերից մեկը պետական համալսարանների իրավական կարգավիճակի սահմանումն է: Այն նախատեսում է կարգավիճակի մի լայն սպեկտր. սկսած պետության կողմից խիստ հսկողությունից՝ միջև լիակատար անկախությունն ու ինքնավարությանը: Աղյուսակ 1–ի տիպաբանությունը ներկայացնում է սպեկտրի բազմաթիվ հնարավոր կետերից չորսը, սակայն նույնիսկ այդ ծայրահեղությունները պարզ՝ սև-ու-սպիտակ, լուսանկարներ չեն: Պետության կողմից վերահսկողության մոդելի շրջանակներում պետք է որոշակի ազատություն ենթադրվի, քանի որ նախարարությունը չի կարող ամեն ինչ վերահսկել և անկախության մոդելի պայմաններում ենթադրաբար ընդունվում է, որ հաստատությունները շատ առումներով հաշվետու են Կրթության նախարարությունը և վերջինս էլ լիազորված է վերահսկել ամբողջ հաստիքի ընդհանուր ռազմավարությունը:¹⁸ Հայաստանի պետական բուհերը պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություններ են և գտնվում են ԿԳՆ իրավասության տակ՝ որոշ մակարդակի ինքնավարությամբ: Ուստի Բարձրագույն կրթություն կառավարման հայաստանյան մոդելը համապատասխանում է կիսաինքնավարության մոդելին:

¹⁷ Այս օրենքը նույնպես հակասում է Սահմանադրությանը

¹⁸ Fielden, John, 2008, *Global Trends in University Governance*, Education Working Paper Series, No. 9, World Bank: Washington, DC.

Աղյուսակ 1: Չորս մոդելներ. Վերահսկողությունից մինչև ինքնավարություն

Բուհերի կառավարման մոդել	Պետական համալսարանների կարգավիճակը	Օրինակներ
Ա. Պետ.վերահսկողությամբ	Կարող է լինել ԿԳՆ ենթակա հիմնարկ, կամ պետական սեփականություն հանդիսացող կորպորացիա	Մալայզիա
Բ. Կիսաինքնավար	Կարող է լինել ԿԳՆ ենթակա հիմնարկ, կամ պետական սեփականություն հանդիսացող կորպորացիա, կամ կանոնադրական մարնին	Նոր Զելանդիա, Ֆրանսիա
Գ. Կիսանկախ	Կանոնադրական մարմին, բարեգործական կամ եկամուտ չհետապնդող կորպորացիա՝ ԿԳՆ իրավասության տակ	Մինգապուր
Դ. Անկախ	Կանոնադրական մարնին, բարեգործական կամ եկամուտ չհետապնդող կորպորացիա՝ առանց պետության մասնակցության և վերահսկողության ազգային ռազմավարության առումով, այլ միայն հանրային ֆինանսավորման նկատմամբ	Ավստրալիա, Միացյալ Թագավորություն

Վերցված է՝ Fielden, John, 2008, *Global Trends in University Governance*, Education Working Paper Series, No. 9, World Bank: Washington, DC.

17. **Մասնավոր ԲՈՒՀ-երի սահմանափակումներն ավելի քիչ են, քան պետական բուհերինը:** Կրթության մասին օրենքը (հոդված 27) սահմանում է, որ ոչ պետական բուհերը կարող են ստեղծվել Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված ցանկացած հիմնադրի կողմից և կարող են ունենալ Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին օրենքով նախատեսված ցանկացած իրավական կարգավիճակ, այդ թվում՝ անհատ ձեռներեց կամ ընտանեկան ձեռնարկություն, տնտեսական ընկերակցություն, արտադրական կոոպերատիվ¹⁹, սպառողական կոոպերատիվ, գյուղական կոլեկտիվ տնտեսություն, փակ բաժնետիրական ընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, հանրային ծառայություն ձեռնարկություն, պետական (տեղական մարմնի) ձեռնարկություն և այլն: Կախված իրավաբանական կարգավիճակից, ոչ պետական բուհերը մտնում են համապատասխան օրենքների ենթակայության տակ, ինչպիսիք են՝ Հիմնադրամների մասին օրենքը, ՍՊԸ մասին օրենքը, Կոոպերատիվների մասին օրենքը, ՀԶ մասին օրենքը, և այլն: Քանի որ մասնավոր

¹⁹Խորհրդային ժամանակաշրջանում, կոոպերատիվները Հայաստանի օրենքով թուլատրված մասնավոր ձեռնարկատիրության միակ ձևերն էին: Հետևելով այս պրակտիկային, վաղ 1990-ականներին սկսվեցին ստեղծվել մասնավոր բուհեր: Կոոպերատիվների մասին 30.12.1993թ. Օրենքի ընդունումից հետո կոոպերատիվ բուհերը պահպանեցին իրենց իրավաբանական կարգավիճակը: Բուհերին կանոնակարգող հետագա օրենքները նույնպես նրանց կարգավիճակի փոփոխություն չպահանջեցին:

եր 23 պետական բուհերից (19 պետական և 4 միջկառավարական) և 48 մասնավոր բուհերից (39 տեղական մասնավոր և օտարերկրյա բուհերի 9 մասնաճյուղեր), կամ՝ ընդհանուր առմամբ 71 ուսումնական հաստատություններ: Այնտեղ սովորում են մոտ 95000 ուսանողներ. պետական բուհերում, 8700-ը՝ միջկառավարական բուհերում, 20000-ը՝ տեղական մասնավոր բուհերում²⁰, և 3000 ուսանողներ՝ օտարերկրյա բուհերի մասնաճյուղերում²¹, կամ ընդամենը 126700 ուսանողներ: Այս ԲՈՒՀ - երը կարելի է բաժանել յոթ ենթախմբային կատեգորիաների ըստ Աղյուսակ 2-ում ամփոփված իրավական կարգավիճակների. (Պ1)՝ ՊՈԱԿ-ներ, (Պ2)՝ պետական հիմնադրամներ, (Մ1) միջկառավարական Բուհեր կամ համատեղ կառավարմամբ, (Մ2) միջպետական հիմնադրամներ, (Շ1)՝ շահույթ հետապնդող մասնավոր ՍՊԸ-ներ և կոպերատիվներ, (Շ2), շահույթ չհետապնդող մասնավոր հիմնադրամներ, և (Շ3) օտարերկրյա բուհերի մասնաճյուղեր: Ստորև բերվում է յուրաքանչյուր տեսակի համառոտ նկարագրությունը:

²⁰ Karakhanyan, Susanna, 2012, *Governance of Higher Education in Armenia*, in Bergan S., Egron-Polak, E., Kohler, J., Purser, L., *Leadership and Governance in Higher Education: Handbook for Decision-makers and Administrators*, Berlin: Raabe Academic Publishers, pp. 113-129.

²¹ ԿԳՆ-ը նրանցից նույնիսկ տվյալներ չի հավաքագրում ուսանողների քանակի վերաբերյալ: Տեղեկություններ ձեռք բերելու համար Համաշխարհային բանկի աշխատակազմը հեռախոսով դիմել է յուրաքանչյուր մասնաճյուղին: Նրանց 9-ից 6-ը տվյալներ տրամադրեց, իսկ 3-ը՝ մերժեցին: 2012թ. հոկտեմբերի դրությամբ 6 մասնաճյուղերում սովորում էին 2832 ուսանող: Հաշվի առնելով բացակայող տվյալները, ընդհանուր քանակը կարող էր լինել մոտ 3000 – 3300 ուսանող:

Աղյուսակ 2: Հայաստանի ԲՈՒՀ –երի տեսակները ըստ իրավական կարգավիճակի

Types	Public				Private		
	A. State		B. Inter-governmental ^{1/}		C. Local		D. Foreign
	S1	S2	I1	I2	P1	P2	P3
	SNCOs	Foundation	Inter-governmental	Inter-state Foundations	For-profit	Not-for-profit Foundations	Branches of foreign univ.
No. of HEIs ^{2/}	18	1	2	2	37	2	9
No. of students	95,000		8,700		20,000		3,000
HEIs	All state HEIs except Agrarian	Agrarian	Slavonic; French	EREA; ^{3/} American	e.g., Gladzor; Gyumri Progress University; EIU ^{4/}	Eghegnadzor's Knowledge Univ.; Yerevan Int'l Center for Accountancy Teaching	e.g., Moscow State Univ. of Economics, Statistics and Informatics; Moscow Inst. of Business and Law
Major governing laws	Law on NCSOs	Law on Foundations	Slavonic: Agreement b/w the RF and RA; French: Agreement b/w Armenian MOES and French Embassy in Armenia, and Law on Foundations	Law on Foundations; Civil Code	Law on LLCs; Law on Coops; Law on JSCs, etc.	Law on Foundations	Law on Registering of Legal Entities and Records on Separate Units of Legal Entities, their Institutions and Private Enterprises

Աղբյուրը. Կազմած է հեղինակի կողմից.

Շիտ. ^{1/} Միջկառավարական բուհերը նրանք են, որոնք հիմնադրվել են երկու կառավարությունների, օր.՝ Հայաստանի Հանրապետությունը և այլ երկրի կառավարության, միջև և Հայաստանի կառավարության և օտարերկրյա ոչ կառավարական անձանց միջև; ^{2/} 2012թ. հունիսի 22 – ի դրությամբ արտասահմանյան մասնավոր համալսարանները և մասնաճյուղերն են; ^{3/} Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան; ^{4/} Եվրասիական միջազգային համալսարանը.

Ա. Հանրային – Պետական բուհեր

19. **(Պ1) ՊՈԱԿ:** Ինչպես վերը նշված է, բոլոր պետական Բուհերի իրավական կարգավիճակի 2002-2003թթ.- ին պետական հաստատություններից փոփոխվել է ՊՈԱԿ-ի: Այս փոփոխությունը պետական ԲՈՒՀ – երին դրեց ՊՈԱԿ-ի մասին օրենքի ենթակայության տակ և Կառավարությանն ու ԿԳՆ – ին օժտեց պետական բուհ – ՊՈԱԿ – ների (Պ1) նկատմամբ մեծ լիազորություններով:

20. **(Պ2) Հիմնադրամ:** Կրթության մասին օրենքների և ՊՈԱԿ-ի մասին օրենքի միջև իրավական հակասությունները հաղթահարելու մպատակով Հայաստանի պետական Ագրարային համալսարանը փոխել է իր ՊՈԱԿ-ի իրավական կարգավիճակը և 2012 թ. հունիսին վերագրանցվել է որպես հիմնադրամ:²² Որպես այդպիսին, համալսարանը այլևս ենթակա չէ ՊՈԱԿ-ի մասին օրենքին: Փոխարենը,

²² 14.06.2012թ. Կառավարության թիվ 872-Ն որոշումը Հայաստանի պետական ագրարային համալսարան ՊՈԱԿ-ը որպես Հայաստանի պետական Ագրարային համալսարան Հիմնադրամ վերագրանցելու մասին: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77158>. Համալսարանը նախաձեռնել էր և կառավարությունը՝ ընդունել:

այն այժմ գտնվում է Հիմնադրամների մասին օրենքի տիրույթում:²³ ՀՀ ԿԳՆ-ը, կարծես, աջակցում է այս նախաձեռնությանը և դիտարկում է այն որպես փորձնական ծրագիր, որպեսզի գնահատի, թե արդյոք նոր իրավաբանական կարգավիճակը կրթական ծառայություններ մատուցելու համար առավել բարենպաստ տարբերակ է կլինի:²⁴

Բ. Հանրային – Միջկառավարական Բուհեր (մանրամասն տես՝ Ներդիր 3)

21. **(Մ1) Միջկառավարական: Ռուս – հայկական (Սլավոնական) համալսարանը (ՌՀՀ) և Հայաստանի Ֆրանսիական համալսարանի հիմնադրամը (UFAR) պատկանում են այս կատեգորիային:** ՌՀՀ-ն ըստ գրանցման վկայականի “համատեղ կառավարմամբ բարձրագույն կրթության պետական հաստատություն է”²⁵, որը ստեղծվել է Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարության և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության միջև կրքված համաձայնագրի հիման վրա: UFAR-ը հիմնադրվել է 2000 թ - ին Ֆրանսիայի և Հայաստանի կառավարությունների կողմից՝ Լիոնի Ժան Մուլին և Թուլուզի 1 Քապիթոլ համալսարանի հետ համագործակցությամբ:²⁶

22. **(Մ2) Միջպետական հիմնադրամներ: Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) և Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան (ԵԿՏԱ) պատկանում են այս կատեգորիային:** Դրանք, ընդհանուր առմամբ, ընկալվում է որպես երկու կառավարությունների միջև միջկառավարական բուհերի, ինչպիսիք են ՌՀՀ-ը և UFAR -ը, սակայն նրանք ունեն միջպետական հիմնադրամների իրավական կարգավիճակ, որտեղ Հայաստանի կառավարությանը հիմնադիրներից մեկն է:

²³ Հիմնադրամների մասին օրենքի 38 հոդվածը հիմնադրամներից պահանջում է ներկայացնել. 1) ծրագրային առաջարկը, ֆինանսավորման աղբյուրը, ծախսերը, գույքային պայմանները, խորհրդի անդամների անվանացանկը, հաստիքացուցակը և այլն, 2) տարեկան ֆինանսական հաշվետվությունը 3) ֆինանսական հաշվետվության հաշվեքննություն իրականացրած անձի (աուդիտոր), եզրակացությունը, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը անցնում է 10 մլն դրամը: Որպես հիմնադրամ, համալսարանը ենթակա է Արդարադատության նախարարության վերահսկողությանը, սակայն, անկախ իրավաբանական կարգավիճակից, համալսարանը նաև ենթակա է Գյուղատնտեսության նախարարությանը, և, հավանաբար, այս պրակտիկան կշարունակվի:

²⁴ Համալսարանների ռեկտորների հետ հանդիպման ժամանակ նախարարը հայտարարել է, որ (տես՝ http://www.asparez.am/news-hy/poakner_veracvumen_himnadramneri-hy/) –ԿԳՆ –ը քննարկում է ԱՆ – ի հետ ՊՈԱԿ օրենքի անհամապատասխանությունը ԲԿՕ – ի հետ, հարցը:

²⁵ Օրենքի առումով ոչ մի օրենքում այս տիպի իրավաբանական անձի սահմանում չկա:

²⁶ Հայաստանի անունից հիմնադիրները ԱԳ և ԿԳ նախարարություններն են, իսկ Ֆրանսիայի անունից՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը:

Ներդիր 3 Միջառավարական և միջպետական բուհեր

Ռուս – հայկական (Սլավոնական) համալսարան (ՌՀՀ): Համաձայնագրով նախատեսված է, որ հայկական կողմը համալսարանի համար տրամադրում է շենքեր, հողատարածք, հանրակացարաններ, մարզական, առողջապահական և մշակութային հարմարություններ, ինչպես նաև պարտավորվում է օգնել ստեղծելու համապատասխան պայմաններ ՌՀՀ այցելող պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատակազմի համար: ՌՀՀ-ի գործունեությունը ֆինանսավորվում է հիմնականում ՌԴ դաշնային բյուջեից հատկացումներով և մի փոքր գումար էլ հատկացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ պետատվերով սովորող ուսանողների համար (70 տեղ՝ 2011/12-ին): Համալսարանը հավատարմագրված է Ռուսաստանի ազգային հավատարմագրման գործակալությունը կողմից 2005թ.-ին և իր շրջանավարտներին տալիս է հայկական և ռուսաստանյան տիպի դիպլոմներ: Թեև ԲԿ օրենքը և կառավարության թիվ 978-Ն 30.06.2011թ. «Ուսումնական հաստատությունների և նրանց մասնագիտությունների հավատարմագրման կարգի մասին» որոշումը (Հավելված, Բաժին 1, կետ 3), պահանջում են, որ Հայաստանի տարածքում յուրաքանչյուր բուհ ենթակա է հավատարմագրման, սակայն ակնկալվում է, որ ՈԱԱԿ-ը կճանաչի ՌՀՀ-ի հավատարմագրումը Ռուսաստանի ԱՀԳ կողմից, որը ENQA -ի լիիրավ անդամ է հանդիսանում:

Հայաստանի Ֆրանսիական համալսարան հիմնադրամ (UFAR): UFAR-ը ղեկավարվում է Հայաստանի իրավական ակտերով, այդ թվում՝ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, Հիմնադրամների մասին օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև համապատասխան միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով: Այն տալիս է միաժամանակ հայկական և ֆրանսիական տիպի դիպլոմներ:²⁷ Համալսարանը Հայաստանի կառավարությունից ֆինանսավորում է ստանում պետական պատվերով սովորող ուսանողների փոքր խմբի համար (35 տեղ՝ 2011/12թ-ին):

Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ) . ՀԱՀ հիմնադրվել է 1991 թ – ին՝ սկզբում որպես շահույթ չհետապնդող ՄՊԸ -համատեղ ձեռնարկության, այնուհետև 2001 թ.-ին վերագրանցվել է որպես հիմնադրամ:²⁸ Հիմնադրամի հիմնադիրները են ԿԳՆ և «Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիան» (ՀԱՀԿ)՝ ոչ կառավարական, շահույթ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն, որը գրանցված է Կալիֆոռնիա նահանգի (ԱՄՆ) օրենսդրության համաձայն: Հիմնադրամը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, Հիմնադրամների մասին օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, և համալսարանի կանոնադրությամբ:²⁹ ՀԱՀ-ը հավատարմագրված է Դպրոցների և քոլեջների Արևմտյան ասոցիացիայի Ավագ քոլեջների և համալսարանների Հավատարման հանձնաժողովի կողմից: ՀԱՀ պետական ֆինանսավորում չի ստանում:

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա (ԵԿՏԱ). ԵԿՏԱ-ն հիմնադրվել է 2002թ-

²⁷ Ըստ՝ արտաքին հարաբերությունների և որակի ապահովման գծով ռեկտորի տեղակալի խոսքերի:

²⁸ Համալսարանը ստեղծվել է ՀԱՀԿ և Կալիֆոռնիայի համալսարանի միջև 05.09.1991թ. կնքված կորպորատիվ համաձայնագրի հիման վրա և ՀՀ Նախարարների խորհրդի 21.09.1991թ. թիվ 570 «Հայաստանի ամերիկյան համալսարանի ստեղծման մասին» որոշմամբ: ՀՀ Ֆինանսների նախարարության ֆինանսատնտեսական վարչության կողմից այն գրանցվել է ՀՀ տարածքում գործող համատեղ ձեռնարկությունների գրանցամատյանում, որտեղ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության պետական Կոմիտեն և ՀԱՀԿ –ն հիշատակված են որպես Կողմեր: Վերագրանցումը կատարվել է 23.01.2001թ. թիվ 48 Կառավարության որոշմամբ:

²⁹ ՀԱՀ ներկայացուցչի բառերից:

ին մի շարք եվրոպական երկրների և Ռուսաստանի 20 եվրոպական և ռուսաստանյան բուհերի հետ կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա:³⁰ ՀՀ կառավարությունը ԵԿՏՍ –ի մասնակից կողմ է հանդիսանում: Ակադեմիան համարվում է «պետական և մասնավոր ներդրումներով ստեղծված միակ կրթական հաստատությունը»:³¹ ԵԿՏՍ-ն պետական ֆինանսավորում է ստանում պետական պատվերով սովորող ուսանողների փոքր խմբի համար (15 տեղ՝ 2011/12թ-ին):

Գ. Տեղական մասնավոր բուհեր

23. **(Շ 1) Շահույթ հետապնդող ԲՈՒՀ-եր:** Բացի երկու հիմնադրամներից, Հայաստանում բոլոր շահույթ հետապնդող մասնավոր ԲՈՒՀ – երը առևտրային կազմակերպություններ են, որոնք կարգավորվում են վերոհիշյալ համապատասխան օրենքներով: Բոլորը համարվում են առևտրային կազմակերպություններ և որպես ուսումնական հաստատություններ՝ ոչ մի հատուկ արտոնություններից չեն օգտվում:

24. **(Շ 3) Շահույթ չհետապնդող հիմնադրամներ:** Հայաստանում շահույթ չհետապնդող մասնավոր բուհ դառնալու ճանապարհը՝ այն որպես հիմնադրամ գրանցելն է: Դրանք երկուսն են: Շահույթ հետապնդող մասնավոր բուհի և շահույթ չհետապնդող մասնավոր հիմնադրամի միջև միակ հիմնական տարբերությունը այն է, որ, եթե առաջինը բոլոր եկամուտներից վճարում է շահութահարկ, ապա մյուսը ազատված է նվիրատվություններից շահութահարկ վճարելուց: Սա թույլ է տալիս, որ մյուսը միջազգային կազմակերպություններից, ՀԿ-ներից և այլ կազմակերպություններից նվիրատվություններ հայթայթի: Այլ դեպքերում, այդ երկու տեսակի մասնավոր բուհերի նկատմամբ վերաբերմունքը նույնն է: (Ամբողջ աշխարհում շահույթ հետապնդող և շահույթ չհետապնդող մասնավոր համալսարանների պատկերը տես՝ Ներդիր 4-ում):

Դ. Օտարերկրյա Բուհ - եր

25. **(Շ 2) Օտարերկրյա Բուհ –երի մասնաճյուղեր:** Օտարերկրյա բուհերի մասնաճյուղերը կարգավորվում են Իրավաբանական անձանց պետական գրանցման և իրավաբանական անձանց առանձին ստորաբաժանումների, նրանց հաստատությունների և մասնավոր ձեռնարկությունների հաշվառման մասին օրենքով: Ենթակա են ԿԳՆ - ի վերահսկողության, սակայն իրականում, ԿԳՆ-ը այս բուհերի վերաբերյալ քիչ տեղեկություններ է հավաքագրում:

³⁰ Ըստ Կառավարության թիվ 978 որոշման, 15.10.2001թ.

³¹ <http://www.eriicta.am/>

Ներդիր 4: Ամբողջ աշխարհում շահույթ հետապնդող և շահույթ չհետապնդող մասնավոր համալսարանները

Ամբողջ աշխարհում ավելանում են մասնավոր բուհեր ընդունվող ուսանողների քանակը: Մասնավոր բուհերը սկզբում սկսել են հիմնադրվել ԱՄՆ - ում, Լատինական Ամերիկայում և Ասիայում, և հիմա նրանք սկսել են հայտնվել նաև Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում (հիմնականում անգլախոս, այլ ոչ թե Ֆրանկոֆոն երկրներում), ինչպես նաև վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայում: Պետական բուհերը ավելի քիչ են զգում մասնավոր հատվածի ազդեցությունը Արևմտյան Եվրոպայում:

Որոշ կառավարություններ խրախուսում են մասնավոր բարձրագույն կրթությունը, որպեսզի օգնեն բավարարել բարձրագույն կրթության աճող պահանջարկը, ինչպես նաև ճնշում գործադրեն հանրային բուհերի վրա շուկայամիտությունը և ընդհանուր արդյունավետությունն ու արտադրադականությունը բարելավելու նպատակով:

Երկարակյաց մասնավոր համալսարանները ԱՄՆ - ում, Ճապոնիայում, Լատինական Ամերիկայում եղել են հիմնականում շահույթ չհետապնդող: Այս շահույթ չհետապնդող կազմակերպությունները չեն կարող կազմակերպվել հոգուտ մասնավոր շահերի: Որպես կանոն, **շահույթ չհետապնդող մասնավոր** հաստատությունները ծառայում են քաղաքացիական հասարակության պահանջներին: Եվ նրանք տալիս են.

- սոցիալ - տնտեսապես արտոնյալների տեսակետից՝ ինչ-որ ավելի լավը, քան ստանդարտ զանգվածային հանրային բարձրագույն կրթությանը կառաջարկեր (ԱՄՆ - ում և Լատինական Ամերիկայում, օրինակ), և
- մի ուրիշ բան, որը կրոնական հավատի հետևանք է կամ արտացոլում է էթնիկական կամ ազգայնական նպատակները:

Վերջին տարիներին աշխարհի շատ մասերում կտրուկ աճել է շահույթ հետապնդող հատվածը և ԱՄՆ – ը այդ գլոբալ երևույթի առանցքն է: Ի տարբերություն շահույթ չհետապնդող հաստատությունների, **շահույթ հետապնդող մասնավոր հաստատությունները** սովորաբար գործում են որպես.

- պահանջարկ կլանողներ են, բավարարում են պայմանական բուհերի կողմից չբավարարված պահանջարկը:

Շահույթ հետապնդող հաստատությունները կարող են ծախսել միջոցները, բացառությամբ գործառնական ծախսերի համար և բաժնետերերի ներդրումային ռիսկերի դիմաց նախատեսված գումարները: Ամբողջ աշխարհում գոյություն ունի շահույթ հետապնդող հաստատությունների մի լայն տեսականի: Մալայզիայում, օրինակ, սեփականատերը կարող է լինել ֆիզիկական անձը, ընկերությունները, ընկերությունների կոնսորցիումը, բաց բաժնետիրական ընկերությունները և պետական կորպորացիաները:

Վերցված է: Roger King, 2008, Private universities and public funding: models and business plans. Universities UK: London (http://www.universitiesuk.ac.uk/Publications/Documents/Policy_Commentary1.pdf).

2.4 Որակի ապահովում

26. Մինչև վերջերս, պետական և մասնավոր բուհերից պահանջվում էր լիցենզիավորվել և հավատարմագրվել ԿԳՆ կողմից, սակայն այդ պահանջն այնքան էլ խստորեն չէր կիրառվում: Լիցենզավորման մասին 30.05.2001թ. օրենքը պահանջում է, որ և պետական, և մասնավոր բուհերը լիցենզավորվեն և հավատարմագրվեն ԿԳՆ Լիցենզավորման և հավատարմագրման վարչության կողմից, որպեսզի իրավունք ունենան պետական տիպի դիպլոմներ շնորհել: ³² Պետական բուհերը, սակայն, ինչ-որ կերպ ազատվել էին հավատարմագրման ձևական գործընթացից, և միայն մասնավոր բուհերն էին ենթարկվում այդ պահանջին: 2007–ին հավատարմագրվել էին այն ժամանակ գործող մասնավոր հաստատությունների միայն մոտ մեկ երրորդը (77-ից՝ 28-ը) և ութ չհավատարմագրված հաստատությունների որոշ ծրագրեր: Իսկ 2012թ. դրությամբ, հավատարմագրվել են արդեն 39 բուհերից՝ 33-ը, ինչպես նաև մնացած վեց չհավատարմագրված հաստատությունների մի շարք ծրագրեր: ³³

27. Որակի ապահովման ազգային գործակալության՝ ՈԱԱԿ –ի, 2009թ. հիմնադրումից հետո, բոլոր պետական և մասնավոր բուհերը պետք է լիցենզավորվեն ԿԳՆ–ի կողմից և հավատարմագրվեն ՈԱԱԿ –ի կողմից: ՈԱԱԿ-ը ստեղծվել է Հայաստանում որակի ապահովման ազգային համակարգը հզորացրելու նպանակներով: Գործակալության հիմնական խնդիրն է. «Բարձրագույն մասնագիտական մակարդակի կրթության ոլորտի հետազոտություններ և վերլուծություններ իրականացնել, առաջարկություններ անել և գնահատել»: ³⁴ Այն մշակել է *“Բարձրագույն մասնագիտական մակարդակի ուսումնական հաստատությունների և ուսումնական ծրագրերի պետական հավատարմագրման և հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների կանոնակարգը*, որով սահմանում են որակի արտաքին ապահովման քաղաքականությունները, ընթացակարգերը, չափանիշները և չափորոշիչները: ³⁵ Ըստ նոր հավատարմագրման կարգի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բուհերը յուրաքանչյուր հինգ տարին մեկ պետք է անցնեն հավատարմագրման պարտադիր

³² 13.12.2007թ. Կառավարության թիվ 1490-Ն որոշմամբ բուհերի հիմնադիրները պարտավոր են բուհին տրամադրել տարածք, հարմարություններ և այլ անհրաժեշտ միջոցներ ըստ Հավելված 6-ի ցանկի: Հուլիս 09.07.2009թ. Կառավարության թիվ 808-Ն որոշմամբ նաև պահանջվում է նաև, որ բոլոր բուհերը, անկախ սեփականության ձևից, հապապատասխանեցվեն թիվ 1490-Ն որոշման պահանջներին (հավելված 15):

³³ Վերցված է՝ Ակադեմիական ճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոն (ARMENIC), Հայաստանի հավատարմագրված մասնավոր ԲՈՒՀ-երի և մասնագիտական ծրագրերի ցանկը; Հայաստանի չհավատարմագրված մասնավոր բուհերի հավատարմագրված մասնագիտական ծրագրերի ցանկը (վերցված է [http://www.armenic.am/?laid=1 &com=module& module=menu&id=123](http://www.armenic.am/?laid=1&com=module&module=menu&id=123)).

³⁴ ՈԱԱԿ–ի կանանադրությունը հաստատվել է 27.11.2008թ. Կառավարության որոշմամբ No. 1486-Ն, Հոդված 1.

³⁵ Կառավարության որոշում, թիվ 978-Ն, 30.07. 2011թ.

գործընթաց, իսկ ծրագրերի հավատարմագրումը կամավոր գործընթաց է և իրականացվում է միայն բուհի դրական հավատարմագրման դեպքում: 2012 թ. կիսամյակի դրությամբ երկու պետական բուհերում փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրումն ավարտվել էր և վերջնական որոշումը սպասվում է: Եվս հինգ պետական և երկու մասնավոր հաստատությունների հավատարմագրումը ընթացքի մեջ է: Վերջնական զեկույցը հրապարակվում է ՈԱԱԿ - ի ինտերնետային կայքում, երբ Հավատարմագրման հանձնաժողովը՝ ՈԱԱԿ -ի որակի ապահովման բարձրագույն մարմինը, որոշում է կայացնում: Վերջնական զեկույցը և հավատարմագրման հանձնաժողովի որոշումը քննարկելուց հետո ՈԱԱԿ-ը համապատասխան բուհերին և ծրագրերին հավատարմագրման վկայագրեր է շնարհում:³⁶ Վերջնական որոշմանից հետո, ՈԱԱԿ – ի կողմից չհավատարմագրման (այդ թվում՝ պայմանական հավատարմագրման) դեպքում բուհերը կարող են շարունակել գործունեությունը, սակայն չհավատարմագրված բուհերի կողմից տրված կրեդիտները և գիտական աստիճանները չեն կարող ընդունվել Հայաստանի պետական կամ այլ բուհերի կողմից: Նույն կարգը կիրառվում է նաև միջկառավարական բուհերի և օտարերկրյա համալսարանների մասնաճյուղերի նկատմամբ, եթե նրանց մայր համալսարանները արդեն հավատարմագրված չեն ENQA – ի անդամ որակի ապահովման որևէ գործակալության կողմից:

28. Կարճ ժամանակահատվածում ՈԱԱԿ-ը մեծ ձեռքբերումների է հասել, սակայն դեռ կան հետագա անելիքներ, որպեսզի նա դառնա միջազգայնորեն ճանաչված որակի ապահովման գործակալություն: Ներկայումս ՈԱԱԿ-ը Բարձրագույն կրթություն որակի ապահովման Եվրոպական Միության (ENQA) մասնակից անդամ է և նպատակ ունի մինչև 2015 թ.. դառնալ նրա լիիրավ անդամ: ՈԱԱԿ - ի նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) լիիրավ անդամ է և ներկայացված է INQAAHE - տնօրենների խորհրդում: 2012 թ. մայիսին ՈԱԱԿ -ը փորձագետ էր հրավիրել ENQA – ից, որի խնդիրն էր ուսումնասիրել և գնահատել Հայաստանում հավատարմագրման գործընթացին առնչվող օրենսդրական դաշտի³⁷ համապատասխանությունը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման

³⁶ Սկզբում վկայագրերը տրվում էին ԿԳՆ – ի կողմից, սակայն ENQA – ի մասնագետի խորհրդով այդ լիազորությունը փոխանցվեց ՈԱԱԿ – ին: Կանոնադրության և համապատասխան կանոնակարգերում անհրաժեշտ փոփոխությունները դեռ պիտի արվեն:

³⁷ Ինչպես սահմանված է ՈԱԱԿ –ի Կանոնադրությամբ, *Բարձրագույն մասնագիտական մակարդակի ուսումնական հաստատությունների և ուսումնական ծրագրերի պետական հավատարմագրման կանոնակարգի մասին Կառավարության թիվ 978-Ն որոշմամբ, ՈԱԱԿ – ի հավատարմագրման հանձնաժողովի կազմավորման և գործարկման ընթացակարգով* (նախագիծ), և ՈԱԱԿ – ի կադմակերպական կառուցվածքում (նախագիծ).

չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG): Այդ աշխատանքի երկու հիմնական արդյունքները և կատարված առաջարկությունները հետևյալն են.³⁸

- ՈԱԱԿ –ի կանոնադրության համաձայն, հոգաբարձուների խորհրդի կազմը հավասարակշռված լինելով հանդեձ (հոդված 20)՝ վարչապետի ի պաշտոնե խորհրդի նախագահի հանդիսանալու փաստը (հոդված 14), խարխլում է անկախության հիմքերը: Խորհուրդ է տրվում, որ խորհրդի նախագահի պաշտոնը լինի ընտրովի և մշակվի Խորհրդի գործարկման մի ձեռնակ:
- Բարձրագույն մասնագիտական մակարդակի ուսումնական հաստատությունների և ուսումնական ծրագրերի պետական հավատարմագրման կանոնակարգի համաձայն, հավատարմագրման վկայագրի շնորհման վերջնական որոշումը կայացնում է կառավարությունը (ԿԳՆ), այլ ոչ թե ՈԱԱԿ – ի Հավատարմագրման հանձնաժողովը (Հոդված 21): Առաջարկվում է, որ հավատարմագրման վկայագրերի շնորհման լիազորությունը փոխանցվի Հավատարմագրման հանձնաժողովին: Հավատարմագրման հանձնաժողովի մասին դրույթը պետք է ներառվի ՈԱԱԿ – ի կանոնակարգում, և դրա անկախությունն ու լիազորությունները պետք է սահմանվեն Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և հավատարմագրման հանձնաժողովի գործարկման ձեռնարկի ընթացակարգի մասին կանոնակարգով:

Զեկույցն ավարտվում է նրանով որ «լավ հիմքեր կան ենթադրելու, որ Հայաստանում որակի ապահովման համակարգի հետագա զարգացումը զգալի առաջընթաց կապրի՝ այն հասցնելով Եվրոպական չափանիշներին և պայմաններին»: Ի դեպ, այս երկու առաջարկություններն արդեն արժանացել են վարչապետի և կրթության նախարարի հավանությանը, և հավատարմագրման գործընթացի անկախության և վստահելիության բարելավման անհրաժեշտ փոփոխություններն արդեն ընթացքի մեջ են:

29. Ավարտական քննությունները պետության կողմից օգտագործվել են որպես որակի ապահովման գործիք, սակայն դրա արդյունավետությունը կասկած է հարուցում: Բուհերի կատարողականը մշտադիտարկելու և գնահատելու համապետականորեն սահմանված ցուցանիշներ կամ տվյալների լիակատար շտեմարան չկա: Փոխարենը, ԿԳՆ-ը բուհերից պահանջում է ավարտական քննություններ անցկացնել, որպեսզի հավաստիանա, որ ուսանողների առաջիմության չափանիշները համապատասխանում են սահմանված կրթական չափորոշիչներին: Նախարարության 31.11.2011 թ. թիվ 1197 նորմատիվ ակտը

³⁸ Հանս Ուլրիխ Շմիտի կազմած զեկույցը (Foundation for International Business Administration Accreditation (FIBAA), հատուկ ներկայացուցիչ, ENQA-ի մասնագետ), 10 մայիսի, 2012թ..

պահանջվում է հավատարմագրված բուհերից պետական ավարտական քննություններ անցկացնել, որոնք իրականացվում են յուրաքանչյուր բուհի Ատեստավորման Հանձնաժողովի կողմից:³⁹ Այն համալսարանները և ծրագրերը, որոնք հավատարմագրված չեն, կարող են ատեստավորման հանձնաժողով չունենալ, այդ համալսարանների կամ ծրագրերի շրջանավարտների ավարտական քննությունները կազմակերպվում են հավատարմագրված բուհերում և ծրագրերում: Անկախ նախորդ ուսումնական տարիներին նրանց առաջադիմության ցուցանիշներից, ավարտական քննությաններից կտրված ուսանողները չեն կարող ավարտել բուհը, քանի դեռ դրանք չեն հանձնել: Այդ մեխանիզմը, ի դեպ, ստանդարտացված չէ, սակայն նաև պարզ չէ, թե ինչպես է այն նպաստում շրջանավարտների որակի ապահովմանը:

2.5 Բարձրագույն կրթության ֆինանսավորումը


30. **Ըստ միջազգային չափանիշների, կրթության՝ մասնավորապես բարձրագույն կրթության, համար հատկացվող պետական ծախսերը ցածր են:** Կրթության համար հատկացվող պետական ծախսերը սկսեցին անշեղորեն աճել 2000թ. կեսերից մինչև 2009 թ. տնտեսական ճգնաժամը, որը հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը: Կրթության ոլորտը առավել տուժած ոլորտներից էր, որի սկզբնական բյուջեն կրճատվեց 15 տոկոսով և այն վերականգնելու նշանները դեռ չեն երևում: Չնայած տնտեսության վերականգնմանը, վերջին միջնաժամկետ ծախսերի 2012-2014 թթ. ծրագրից երևում է, որ կրթական ընդհանուր ծախսերը կշարունակեն նվազել առաջիկա երեք տարիների ընթացքում՝ հասնելով մինչև ՀՆԱ-յի 2.6 տոկոսը, որով Հայաստանը հայտնվում է տարածաշրջանի ամենացածր կրթական ծախսեր ունեցող երկրների ցանկում (տես Գծապատկեր 1): Մասնավորապես, բարձրագույն մասնագիտական կրթության պետական ֆինանսավորումը բավականին ցածր է տարածաշրջանային միջինից, էլ չասած ՏՀԶԿ -ի (OECD) միջինը, և կազմում է ՀՆԱ – ի ընդամենը 0.3 տոկոսը և կրթության ընդհանուր ծախսերի 10-12 տոկոսը՝ համապատասխանաբար ՏՀԶԿ–ի 1.3 տոկոսի և 20 տոկոսի համեմատ⁴⁰: Նույնիսկ ավելին, գիտության զարգացման համար սահմանափակ պետական ֆինանսավորումը (ՀՆԱ–յի 0.2 տոկոսը) հիմնականում հատկացվում է Գիտությունների ազգային ակադեմիային՝ սահմանափակելով համալսարանների գիտահետազոտական կարողությունները: Դրան հակառակ, բուհերը պետության հարկային եկամուտների ապահովման

³⁹ Հանձնաժողովի նախագահին առաջադրում է բուհի ռեկտորը և նշանակում է ԿԳՆ – ը:

⁴⁰ World Bank, 2011, Education Chapter, *Public Expenditure Review*. Նշենք, որ Հայաստանի տվյալները շատ մոտավոր են, քանի որ անհնար է պարզորեն տարանջատել ոչ-բուհական ՄԿ – ի և ետ-միջնակարգ ոչ-մասնագիտական կրթ–ն բյուջեները: Միայն ԲԿ ծախսերը մոտ ՀՆԱ – ի 0.2 տոկոսն է և պետծախսերի 8-9 տոկոսը:

աղբյուր են հանդիսանում, օրինակ՝ բուհերը չեն ազատվում ստացած հասույթից /այդ թվում՝ ուսման վարձից, այլ ուսումնական ծառայություններից ստացված վճարներից, ինչպիսիք են՝ երեկոյան դասընթացները և համակարգչային ուսուցումը, քանի որ դրանք համարվում են շահույթ հետապնդող գործունեություն/ վճարվող շահութահարկից: Փաստորեն, Երևանում հաստատված բուհերից շատերը դասվում են 1000 ամենախոշոր հարկատուների շարքին:⁴¹

Գծապատկեր 1: Կրթության համար պետական ծախսերի տոկոսային հարաբերությունը՝ պետական ընդհանուր ծախսերի և ՀՆԱ –ի համեմատ: 2002-2012



Վերցված է՝ Հայաստանի կրթությունը՝ ըստ 2008 & 2011; ԿԳՆ

31. Կառավարությունը բարձրագույն կրթությանը ֆինանսավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար տեղերի (պետպատվերի) ֆինանսավորված և կրթաթոշակների միջոցով, ինչպես նաև սահմանափակ միջոցներ է տրամադրում կապիտալ ներդրումների և գիտահետազոտությունների համար՝ Գիտության պետական կոմիտեի միջոցով: Կառավարությանը պետպատվերի շրջանակներում ֆինանսավորում է պետական բուհերում նեղ մասնագիտացված որոշ ոլորտները՝ հիմնականում մրցութային հիմունքներով և սահմանափակ թվով սոցիալ-տնտեսապես խոցելի ուսանողներին, օրինակ՝ ծնողագուրկներին⁴² հաշմանդամ, սոցիալապես անապահով ընտանիքներից եկած ուսանողներին, զոհված ազատամարտիկների երեխաներին (Հայաստանի կրթաթոշակային/պետպատվերի համակարգը. տես Ներդիր 5): Պետության կողմից բուհերի կապիտալ ներդրումների ֆինանսավորումը չնչին է, և Ֆիզիկական հարմարությունների լիցենզավորման պահանջները բավարարելու համար

⁴¹ Հայաստանի մեծ հարկատուների պաշտոնական ցանկը <http://www.taxinfo.am/taxpayers.htm>.

⁴² Միչև 23 տարեկան երկկողմանի ծնողագուրկները սովորում են պետպատվերի շրջանակներում: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին օրենք, Հոդված 2.

պետական բուհերը դա իրականացնում են իրենց սեփական եկամուտների հաշվին, հիմնականում՝ ուսման վարձից:

Ներդիր 5 Կրթաթոշակ, զինձառայություն և հարկեր

Սահմանադրության 39- րդ հոդվածով նախատեսվում է, որ «յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալու անվճար բարձրագույն և մասնագիտական կրթություն պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում՝ մրցութային հիմունքներով, օրենքով նախատեսված կարգով: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետությունը ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին, ինչպես նաև դրանց ուսանողներին»: Ելնելով այս սահմանադրական պահանջից, կառավարությունը ֆինանսավորում է բուհերում պետպատվերով տեղերը:^{1/}

Բացի պետպատվերով ֆինանսավորվող տեղերից, կառավարությունը պահանջում է, որ պետական ԲՈՒՀ - երը տրամադրեն ուսման վարձի 25-75 տոկոս մասնակի գեղչեր ուսանողների ընհանուր թվի առնվազն 10 տոկոսի համար, այդ թվում, սոցիալապես ծանր պայմաններ ունեցող ուսանողներին: Իրենց կողմից սահմանված չափանիշների հիման վրա բուհերը կարող են առաջարկել նաև լրացուցիչ ամբողջական կամ մասնակի գեղչեր իրենց ուսանողներին, ի լրումն վերոհիշյալ 10 տոկոսի:

Հայաստանի կրթաթոշակային համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն առնչվում է արական սեռի ուսանողների զինվորական ծառայությանը: Նախ, բուհական ընդունելության քննությաններին ամենաբարձր գնահատական ստացած ուսանողը ստանում պետական ամբողջական կրթաթոշակ և ուսման ժամանակահատվածի ընթացքում ազատվում է զինվորական ծառայությունից: Ազատվելու այս հնարավորությունը արական սեռի ուսանողների համար կարող է ավելի կարևոր լինել, քան կրթաթոշակը: Այնուհետև, ընդունելության քննությաններին երկրորդ ամենաբարձր գնահատական ստացած ուսանողը բուհից ստանում է մասնակի գեղչ, սակայն առանց զինվորական ծառայության տարկետման իրավունքի:^{2/} Այս ուսանողների 18 տարին լրանալուն պես երկու տարով զորակոչվում են պարտադին զինձառայության:

Կրթաթոշակային համակարգի (ուսման վարձի գեղչերի) մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ այն կապված է հարկերի հետ: Շահութահարկի և Եկամտահարկի մասին օրենքների համաձայն պետական բուհերի ուսանողների ամսական վարձն ազատվում է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), և ուսանողների 10 տոկոսին տրամադրվող ուսման վարձի գեղչը եկամտային հարկով չի հարկվում: Ինչ վերաբերում է 10 տոկոսը գերազանցող ուսանողներին տրվող ուսման վարձի գեղչին, ապա դրանից եկամտահարկ է պահվում (քանի որ գեղչերը ուսանողների համար համարվում են հարկվող եկամուտ):

^{1/} Վերջերս կառավարությունը ներդրել է ուսանողների արժանիքների վրա հիմնված կրթաթոշակների տարեկան ռոտացիոն համակարգ, որով խրախուսվում է ուսանողների ուսան առաջադիմությունը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ամեն բուհ որոշում է բոլոր պետական բուհերում յուրաքանչյուր մասնագիտությունից պետպատվերով սովորող լավագույն առաջադիմությամբ ուսանողների այն 20 տոկոսը (բացի ԵՊՀ իրավաբանական և արտաքին հարաբերությունների ֆակուլտետներից, որտեղ պետպատվերով տեղեր չկան), ում հաջորդ ուս.տարում կրթաթոշակ է տրամադրվելու: (Վերցված է՝ Karakhanyan, Susanna, 2012, "Governance of Higher Education in Armenia", in Bergan S., Egron-Polak, E., Kohler, J., Purser, L., *Leadership and Governance in Higher Education: Handbook for Decision-makers and Administrators*, Berlin: Raabe Academic Publishers, pp. 113-129).

^{2/} Կառավարության թիվ 1183-Ն, 27.07. 2006թ. որոշմամբ սահմանվում է այս կատեգորիաների տեսակները:

32. **Քանի որ վերջին տասնամյակում պետական ֆինանսավորման մակարդակը շարունակում է կտրուկ նվազել, պետական ԲՈՒՀ – երի միակ ընտրությունը մնում է հույսը դնել ուսման վարձերի վրա:** ⁴³ Ուսումնասիրված 10 պետական բուհերում պետության կողմից ֆինանսավորումը ամբողջի մեջ կազմում է 14-ից մինչև 30 տոկոս, կամ միջինը՝ 23 տոկոս: Բոլոր պետական բուհերի համար պետական ֆինանսավորումը միջին հաշվով կազմում է ընդամենը 21 տոկոս:⁴⁴ Պետական ֆինանսավորման պակասը լրացնելու միջոցը վճարովի ուսանողների ուսման վարձն է: Մանկավարժական համալսարանն, օրինակ, իր եկամուտների 81 տոկոսը հայթայթում է ուսման վարձից, որը 10 պետական բուհերից ամենաբարձր ցուցանիշն է, նույնիսկ ավելի բարձր, քան միջկառավարական և միջպետական բուհերում: Միայն շահույթ հետապնդող մասնավոր բուհերն են ավելի բարձր ուսման վարձ հավաքագրում (չորս հետազոտվածների մոտ՝ 94-100 տոկոս): Իրականում, գրեթե բոլոր 10-ը պետական բուհերն էլ նշել են, որ կայուն եկամուտներ ապահովելու համար նրանք փորձում են ավելացնել վճարովի ուսանողների քանակը, ինչպես նաև բարձրացնեն ուսման մակարդակը:


33. **Հայաստանը ծայրահեղորեն կախված է մասնավոր ֆինանսավորումից, և այն ամենաբարձրերից է աշխարհում:** ՏՀԶԿ երկրների կառավարությունները 2009թ.-ին ֆինանսավորվել են բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերի միջին հաշվով 70 տոկոսը. Չիլի՝ 23.4 տոկոս, Կորեա՝ 26.1 տոկոս, Մեծ Բրիտանիա՝ 29.6 տոկոս, Դանիա՝ 95.4 տոկոս, Ֆինլանդիան՝ 95.8 տոկոս և Նորվեգիա՝ 96.1 տոկոս (տես Գծապատկեր 2): Երկու ՏՀԶԿ անդամ չհանդիսացող մեծ 20-յակի երկրներից՝ Ռուսաստանի դաշնությունը ծախսել 64,6 տոկոս և Արգենտինան՝ 80,6:⁴⁵ Հայաստանի կառավարությունը բարձրագույն կրթության ֆինանսավորման համար պետական ծախսերից հատկացրել է ավելի քիչ տոկոս, քան վերոհիշյալ երկրներից որևէ մեկը:

⁴³ 2011-2012 ուսումնական տարում բուհերից շատերի մոտ ընդունելությունը կրճատվել էր ավելի քան 50 տոկոսով, որովհետև ընդհանուր միջնակարգ կրթության տարիների ավելացման պատճառով 2010թ. միջնակարգ դպրոցները շրջանավարտ չէին տվել: Դրա արդյունքում համալսարանները կանգնել են եկամուտների զգալի նվազեցման փաստի առաջ, որի հետևանքները դեռ կշարունակվել զգացնել տալ մինչև 2016/17-ը: Որպես իրավիճակից դուրս գալու միջոց, շատ բուհեր կրճատել են իրենց դասախոսական կազմի մի մասը:

⁴⁴ Karakhanyan, Susanna, 2012, *Governance of Higher Education in Armenia*, in Bergan S., Egron-Polak, E., Kohler, J., Purser, L., *Leadership and Governance in Higher Education: Handbook for Decision-makers and Administrators*, Berlin: Raabe Academic Publishers, pp. 113-129.

⁴⁵ OECD, 2012, *Education at A Glance 2012*, Table B3.2b.

Գծանկար 2: Մասնագիտական կրթության հաստատությունների համար պետական ծախսերի տոկոսային հարաբերությունը՝ մասնագիտական կրթության ընդհանուր (պետական և մասնավոր) ծախսերի համեմատ, 2009




Վերցված է՝ OECD, 2012, *Education at A Glance 2012*, Table B3.2b.

Ծան.՝ Տվյալների բացակայության պատճառով Հայաստանն արտահայտող տոկոսի մեջ ներառված չէ ոչ-բուհական մասնագիտական կրթությունը և այն, հավանաբար, կարող էր ավելի բարձր լինել, քան միայն համալսարանական կրթության տոկոսը:

34. **Բացի այդ, ուսման վարձի մակարդակը իրենց տնտեսական զարգացման համեմատ բարձր է:** Ներկայումս, պետական բուհի ուսանողների 74%-ի ուսման վարձը տատանվում է 150,000-800,000 դրամ (USD 375-2,000): Ուսման վարձի մակարդակը համեմատաբար բարձր է նման ցածր միջին եկամուտ ունեցող երկրի համար (մեկ շնչի հաշվով ՊՄԳ (PPP) ՀՆԱ-յի 7-37 տոկոսին համարժեք), որտեղ մեկ շնչի ՊՄԳ ՀՆԱ –ը կազմում է 5354 ԱՄՆ դոլար (2010թ.): Համեմատության համար՝ ըստ առկա տվյալների 24 ՏՀԶԿ անդամ երկրներից 16 երկրներում պետական բուհերի կողմից գանձվող ուսման վարձը հավասար է մեկ շնչի հաշվով ՊՄԳ ՀՆԱ - ի 8% -ին, Կորեայում այն 19 տոկոս է, Իռլանդիայում՝ 16 տոկոս, Ճապոնիայում՝ 14 տոկոս, և ԱՄՆ–ում՝ 14 տոկոս, ամենաբարձրը՝ (տես Նկար 3): Ութ երկրներում պետական բուհերի բոլոր ուսանողների համար ուսման վարձ ընդհանրապես չկա: Նույնիսկ մասնավոր բուհերը 17 երկրներում գանձում են միջինը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-յի 21 տոկոսը:⁴⁶

⁴⁶ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից, ըստ՝ OECD, 2012, *Education at A Glance 2012*, Tables B5.1 and X2.1.

Նկար 3: Բուհերում ուսանողների տարեկան ուսման վարձի միջին գնահատված ցուցանիշը, 2008-09 ուսումնական տարվա համար



Վերցված է՝ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից, ըստ՝ OECD, 2012, Education at A Glance 2012, Tables B5.1 and X2.1

35. Հիմնականում կարիքների վրա հիմնված պետական ֆինանսավորումը և ուսման վարձից ավելի ու ավելի բարձրացող կախվածությունը սոցիալ - տնտեսապես անապահով շրջանավարտներին զրկել է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Բարձրագույն մասնագիտական կրթության ուսանողների ընդունելության ընդհանուր մակարդակի բարձրացման հետ հանդերձ, բարձրագույն կրթության հասանելիության պայմանները մնում են խիստ անհավասար: Կարիքների վրա հիմնված կրթաթոշակ ստացողները ամենայն հավանականությամբ առավել ապահով և քաղաքաբնակ ընտանիքներից են. 2009թ - ին 32%-ը եղել են ամենաբարձր եկամուտային խմբերից և կրթաթոշակ ստացողների միայն 6.9% - ն է ներկայացրել ամենացածր եկամտային խումբը⁴⁷: Սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսավորման տարբերակներ տրամադրելու համար կառավարությունն արդեն երկար ժամանակ դիտարկում է պետական աջակցությամբ իրականացվող ուսանողական վարկի սխեմայի ներդրման հարցը: Ցավոք, այդ ծրագիրը 2009 թ-ին սառեցվել է հիմնականում վերջին տնտեսական ճգնաժամի պատճառով: Վերջերս կառավարությունը հավանություն է տվել Պետական աջակցությամբ ուսանողական վարկերի մասին օրենքի նախագծին, սակայն սխեմայի մանրամասները դեռ որոշված չեն: Առանց ֆինանսավորման այլ հնարավորությունների մասնագիտական

⁴⁷ Ըստ Կրթական Ծրագրերի Կենտրոնի տվյալների: Կրթաթոշակի բաշխումը ըստ եկամտային խմբերի սկզբնաղբյուրը՝ ԱՎԾ, Կենսապայմանների համապարփակ հետազոտություն:

կրթության ուսանողների զուտ քանակային (քուլեջները ներառյալ, այսինքն՝ ISCED 5B) ցուցանիշը 2009թ. դրությամբ տատանվում է՝ ամենահարուստների համար 33.4 տոկոսից մինչ ամենաաղքատների համար 7.4 տոկոսը⁴⁸ չնայած նրան, որ ընդունվածների ընդհանուր քանակը համեմատաբար բարձր է նմանատիպ մակարդակի տնտեսական զարգացման համեմատ:⁴⁹

36. Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր ռազմավարությունը նպատակ ունի բարձրագույն կրթության ֆինանսավորումը դարձնելու առավել արդարացի, մրցունակ ու կայուն, սակայն, առանց ընդհանուր պետական ֆինանսավորումը էապես բարձրացնելու այն չի կարող հանգեցնել նախանշված որակին: Բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունն անդրադառնում է բարձրագույն կրթության ներկա ֆինանսավորման համակարգի թերություններին, այդ թվում՝ (i) առկա հարմարությունների /գույքային պայմաններ/ վրա հիմնված բուհերի ֆինանսավորում՝ որակի բարելավման սահմանափակ խրախուսմամբ, (ii) մասնագիտությունների գերաճ՝ առանց աշխատաշուկայի պահանջարկը հաշվի առնելու, (iii) ողջ բարձրագույն կրթական համակարգի անարդյունավետություն՝ կազմված ցածր ուսանող / աշխատակիցներ հարաբերակցություն ունեցող մեծաքանակ փոքր հաստատություններից, (iv) բարձրագույն կրթության ընդունելության անարդար պայմաններ և դանդաղ աճ, և (v) համալսարանների և գիտահետազոտական հաստատությունների տարանջատվածություն: Այս թերությունները հաղթահարելու համար նոր ռազմավարությունն առաջարկում է ներդրել մի Մրցակցային նորարարական հիմնադրամ, որը կաջակցի ազգային զարգացման առաջնահերթությունների և պահանջարկի վրա հիմնված նախագծերին, կարիքների վրա հիմնված կրթաթոշակներին, ազգային առաջնահերթությունների ոլորտի կրթաթոշակներին: Այս նոր ֆինանսավորման սխեմաներն իրականացնելու և բարձրագույն կրթության որակը, մրցունակությունը և արդարությանը բարելավելու համար կառավարությանն անհրաժեշտ է ոչ միայն արդյունավետ կերպով բաշխել առկա ֆինանսական միջոցները, այլև էականորեն մեծացնել բարձրագույն կրթության ընդհանուր պետական ֆինանսավորումը: Բարձրագույն կրթության կապիտալ բյուջեի բացակայությունն ընդհանուր առմամբ կարող է նույնիսկ սպառնալ լիցենզավորման և հավատարմագրման արժանահավատությանը:

⁴⁸ Համաշխարհային բանկի հաշվարկները ըստ՝ Տնային տնտեսությունների հարցման, 2009թ.

⁴⁹ Ըստ Համաշխարհային բանկի EdStats տվյալների շտեմարանի (տվյալների առաջնադրյուրը վերցված է UNESCO – ի Վիճակագրական ինստիտուտից), Հայաստանի ՄԿ (ISCED 5 և 6) ընդունվածների ընդհանուր քանակը 2007-ին կազմում էր 34.1տոկոս, և շեշտակի աճել էր մինչև 47.6 տոկոս՝ 2008-ին, և 51.5 տոկոս՝ 2010-ին. Քանի որ հնարավոր չէ բացատրել 2007 – 2008 թթ-ին ԸԸՔ – ի նման կտրուկ աճի պատճառները, ենթադրվում է, որ նշված ժամանակաընթացքում կարող է փոխված լինել հաշվարկման մեթոդը: Նույնիսկ այդ դեպքում, ելնելով ընդունվածների առկա տվյալներից, 51.1 տոկոս ԸԸՔ-ը շատ բարձր ցուցանիշ է թվում: Քանի որ հեղինակը չի կարողանում բացատրել նման վիճակագրության տրամաբանությունը, այդ թվերը հիմնական տեքստում ներկայացված չեն:

III. Ինստիտուցիոնալ կառավարում

37. Այս բաժնում խոսվում է այն մասին, թե ինչպես է կանոնակարգվում և կիրառվում բուհերի մակարդակով ինքնավարությունը և հաշվետվողականությունը: Այն քննության է առնում ինքնավարության չորս ասպեկտները, որոնք են՝ կազմակերպչական, ուսումնական, մարդկային ռեսուրսներ և ֆինանսավորում և ինստիտուցիոնալ հաշվետվողականություն՝ բուհի արժեքային համակարգի առումով, ֆինանսական ամբողջականության, ուսանողների մասնակցության և կառավարումն իրականացնելու կարողություններ: Այն բացահայտում է ներկայիս կարգավորման համակարգի մի շարք հակասությունները և համալսարանների կառավարման գործում տեսության և իրականության տարբերությունը:

3.1 Ինքնավարություն

3.1.1 Կազմակերպչական ինքնավարություն

38. Բարձրագույն Կրթության մասին և Կրթության մասին ՀՀ օրենքները ԲՈՒՀ-երի համար նախատեսում են ինստիտուցիոնալ ինքնավարություն, սակայն այլ հակասական օրենքները թույլ են տալիս ԿԳՆ-ին միջամտել նրանց գործերին: Չնայած նրան, որ կրթության մասին օրենքները երաշխավորում են պետական բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարությունը, այդուհանդերձ Պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) մասին օրենքը և Հայաստանի հանրապետության պետական կառավարման մարմինների (ՊԿՄ) մասին օրենքը կառավարությանը՝ որպես պետական բուհերի հիմնադրի, լիազորում է միջամտել վերջինիս որոշումներին: Արդյունքում բազմաթիվ պետական բուհեր հաճախ չեն էլ փորձում օգտվել իրենց ինքնավարության իրավունքից: Օրինակ, պետական բուհերը ըստ օրենքի կարող են չհետևել ԿԳՆ-ի կողմից մշակված Պետական Բուհերի Օրինակելի Կոնոնադրությունը, որը սահմանափակում է ԲԿՕ -ի 6 - րդ հոդվածով երաշխավորված բուհերի ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները: Այդուհանդերձ, գրեթե բոլոր պետական բուհերը, բացի երկուսից, ըստ էության, ընդունել են Օրինակելի Կոնոնադրությունը և չեն փորձում վիճարկել այն, որովհետև ցանկացած վերանայում, ի վերջո, ենթակա է լինելու կառավարության հաստատմանը: Միայն Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), որին Կրթություն մասին օրենքով (հոդված 28, կետ 8) ինքնավարության հատուկ կարգավիճակ է շնորհված և Երևանի պետական ճարտարագիտական համալսարանն (ԵՊՃՀ) իրենց կանոնադրություններից հանել են ինքնուրույնությունը սահմանափակող նորմերը: Բուհերը ինքնակառավարվող իրավաբանական անձիք են և տեսականորեն կարող են սահմանել սեփական հաշվառման, հաշվետվությունների և նման այլ

ընթացակարգեր, սակայն բուհերի մեծամասնությունը հետևում է կառավարության վարչական ընթացակարգին:⁵⁰

39. Մասնավորապես, կառավարության ազդեցությունը ներկառուցված է ինստիտուցիոնալ կառավարման համակարգի մեջ: ԲԿՕ – ը (հոդված 15) սահմանում է խորհրդի (կառավարման խորհրդի), ռեկտորի, գիտական խորհրդի, և դեկանների դերն ու գործառույթները (հոդված 15–ը ամփոփված է Ներդիր 6-ում): Այն նշում է, որ բուհի կառավարումը իրականացվում է կառավարության օրենսդրության համաձայն և բուհի կանոնադրությամբ՝ հիմնվելով ինքնակառավարման սկզբունքների վրա և անհատական ղեկավարության և խորհրդի՝ գիտական խորհրդի և ռեկտորատի խորհրդի, կոլեգիալ կառավարման համակցությամբ: Այնուամենայնիվ, այդ մարմինների կանոնների մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտել է կառավարության ճնշող ներկայությունը համալսարանների կառավարման և ղեկավարման գործում, որը և խաթարում է համալսարանի ինքնավարության հիմքերը:

⁵⁰ Կառավարության թիվ 890-Ն ՀՀ Կառավարությունում վարչական ընթացակարգերին հավանություն տալու մասին որոշումը, 20.06.2002թ.

Ներդիր 6

Բարձրագույն կրթության մասին օրենք. Հոդված 15: Բուհերի կառավարումը

Խորհուրդ (կառավարման խորհուրդ)

- **Ժամկետը.** Խորհուրդն ընտրվում է 5 տարով, առանց երկարացման սահմանափակման:
- **Կազմը.**
 - Օրենքը միայն սահմանում է, որ Խորհրդի կազմում լինեն (i) դասախոսներ, (ii) ուսանողների ներկայացուցիչներ, (iii) հիմնադիրների ներկայացուցիչներ, (օր.՝ պետական բուհերի դեպքում՝ կառավարությունը, մասնավորների դեպքում՝ սեփականատերը), և (iv) լիազոր մարմինը (ԿԳՆ-ը՝ պետական և մասնավոր բուհերի համար). Այն կազմված է առնվազն 20 անդամից՝ ըստ բուհերի Կանոնադրության: (դիտ.՝ Չնայած բուհերի Կանոնադրության մեջ կա դրույթ, ըստ որի կառավարությունը իր իրավունքը «լիազորում է» ԿԳՆ-ին, այդ լիազորման ընթացակարգը ոչ մի օրենքով նախատեսած չէ):
 - *Կառավարության թիվ 975-Ն որոշումը բուհական խորհուրդների կազմավորման մասին*, 23.06.200, սահմանում է, որ Խորհուրդը պետք է կազմված լինի՝ 25- ական տոկոս (i) գիտամանկավարժական անձնակազմ, (ii) ուսանողներ, (iii) հիմնադիրի անունից՝ վարչապետի կողմից նշանակված պետական ծառայողներ և (iv) մշակույթը, գիտությունը, տնտեսության և կրթական ոլորտները ներկայացնող ականավոր անձինք, ուր առաջադրում է հիմնադիրը կամ լիազորված պետական մարմինը: Այն պետք է կազմված լինի 20-ից 32 անդամից¹ (դիտ.՝ Հարցվողներից շատերը նշել են, որ Խորհրդում կառավարության ձայնը որոշիչ է, որովհետև այն դե ֆակտո մեծամասնություն է կազմում Խորհրդում):
 - Որոշումով նաև պահանջվում է, որ Խորհրդի անդամները հաստատվեն վարչապետի կողմից և յուրաքանչյուր անդամի անունը առանձին նշված լինի վարչապետի որոշման մեջ: (դիտ.՝ այս կարգը մասնավոր բուհերի վրա չի տարածվում.)
- **Խորհրդի նախագահի ընտրության կարգը.** Նախագահն ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամներից (բացի ուսանողներից): (Կառավարության որոշում թիվ 975-Ն, 23.06. 2005, Հավելված, Մաս 9.)
- **Խորհրդի անդամների ընտրության կարգը.** Ընտրության կարգը սահմանվում է Կառավարության թիվ 975-Ն որոշմամբ, Հավելված, Մաս 2,
- **Գործունեությունը.** Խորհրդի գործունեությունը հետևյալն է.
 - Հաստատում է Բուհի բյուջեն և ռազմավարական ծրագրերը;
 - Քննարկում և գնահատում է Տարեկան հաշվետվությունը (որը ներկայացվում է ռեկտորի կողմից) և հաստատում է հաջորդ տարվա բյուջեն
 - Ընտրում է Ռեկտորին և
 - Հիմնադրին առաջարկություններ է անում բուհի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ մտցնելու մասին:

Ռեկտորը

- **Ժամկետը.** Ռեկտորն ընտրվում է 5 տարի ժամկետով, և միննույն անձը չի կարող ընտրվել երկու անընդմեջ ժամկետից ավելի: ՊՈԱԿ-ի դեպքում կենսաթոշակային տարիքը 65 է.

- **Ընտրության չափանիշները.** ԲԿՕ-ը ռեկտորի պաշտոնի ընտրության չափանիշների պահանջ չի նախատեսում, սակայն բուհի սահմանադրությամբ կարող են լինել որակավորման պահանջներ:
- **Ընտրության կարգը**
 - Ռեկտորն ընտրվում է Խորհրդի կողմից, բաց մրցույթի միջոցով` ըստ ՀՀ օրենքով և բուհի կանոնադրությամբ սահմանված կարգի, փակ քվեարկությամբ:
 - Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատվում են հիմնադրի կողմից: Ռեկտորի ընտրության արդյունքները անվավեր ճանաչվելու դեպքում, նշանակվում են ռեկտորի նոր ընտրություններ: Հիմնադիրը վավերացնում է խորհրդի որոշումը, եթե թեկնածուն հավաքել է ձայների առնվազն երկու երրորդը:

Ռեկտորատ

- **Ընտրության կարգը և գործունեությունը.** Ռեկտորատը ռեկտորի խորհրդակցական մարմինն, որի կազմավորման կարգն ու լիազորությունները սահմանվում են բուհի կանոնադրությամբ:

Ներդիր 7. շարունակություն

Գիտական խորհուրդ (Ակադեմիական խորհուրդ)

- **Ընտրության կարգը.** Բուհի Գիտական խորհուրդը կազմավորվում է Բուհի կանոնադրության համաձայն:
- **Կազմը.** Գիտական խորհրդի անդամ են (i) ռեկտորը, ի պաշտոնե Գիտական խորհրդի նախագահն է, (ii) պրոռեկտորը, (iii) համապատասխան բաժինների պետերը, և (v) ընտրովի անդամները, ըստ Բուհի կանոնադրության;
- **Գործունեությունը.** Կազմակերպում, պլանավորում և կառավարում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքները, ինչպես սահմանված է բուհի կանոնադրությամբ:

Դեկանները

- **Ընտրության կարգը.** Ֆակուլտետների դեկանները և ամբիոնների վարիչները ընտրվում են Բուհի կանոնադրությամբ սահմանված ընտրական կարգով:
- **Գործունեությունը.** Դեկանների պարտավորությունները սահմանափակվում են հետևյալում. վարչական հարցեր, ուսումնառություն և հետազոտություն: Ամբիոնի վարիչներինը` ուսուցում, ուսումնառություն և հետազոտություն:

Դիտ.՝ ^{1/} Բացառություն է կազմում ԵՊՀ – ը, որտեղ ըստ Կանոնադրության կարող են լինել մինչև 70 անդամ:

40. Կառավարությունը ներգործում է բարձրագույն կրթության կառավարման վրա Խորհրդում (կառավարման խորհրդում) իր կողմից նշանակված ներկայացուցչական մեծամասնության ունենալու և նախագահի պաշտոնին քաղաքական գործիչ նշանակելու միջոցով: Ըստ ԲԿՕ - ի, վարչապետն է հիմնադրի անունից առաջադրում (այսինքն, նշանակում) պետական ծառայողներին (25 տոկոս) և մշակութային, գիտական, տնտեսական և կրթական ոլորտներում ճանաչված անձանց (25 տոկոս),

կամ ընդհանուր առմամբ խորհրդի անդամների 50%-ին: Պետական բուհերի խորհրդի նախագահը հաճախ քաղաքական գործիչ է, ինչպես ցույց է տրված Ադյուսակ 3-ում: Քանի որ այդ բարձրաստիճան պաշտոնյաները սովորաբար ժամանակ չունեն ավելի մոտիկից կառավարել բուհերը, իրականում պարզ չէ, թե որն է նման նախագահի դերը, և փաստացի ինչպես է կառավարվում խորհուրդը: Ավելին, վարչապետն է հաստատում խորհրդի անդամների կազմը: Չնայած նրան, որ կառավարության ներկայացուցիչները կազմում են խորհրդի միայն 50% - ը, ոչ թե 51 տոկոսը, մի անեկդոտ է պտտվում այն մասին, որ խորհրդում ներկայացված ուսանողները (25 տոկոս), որոնց հաճախ գլխավորում է մի ուսանող, ով պատկանում է քաղաքական կուսակցության, ընդհանուր առմամբ, պաշտպանում է կառավարության ներկայացուցիչներին:⁵¹ Չնայած խորհրդի կազմի խիստ կանոններին՝ մի քանի համալսարանների հաջողվել է խորհրդի կազմի մեջ արդյունավետորեն ներգրավել մասնավոր հատվածի ներկայացուցիչներին: Օրինակ, ԵՊՃՀ – ը ոչ միայն ներգրավել է մի հայտնի մասնավոր ընկերություն որպես իր խորհրդի անդամ, այլ նաև վերջինիս հետ ստորագրել է ռազմավարական գործընկերության համաձայնագիր և մասնակից է դարձրել բոլոր ռազմավարության քննարկումներին:

⁵¹ Մեջբերված է “Armenpress” ՊԼԳ info (<http://armenpress.am/arm/print/673831/>). Որոշ դեպքերում ուսանողական կազմակերպությունները քաղաքականացված են: (http://blognews.am/arm/news/1811/usanoxakan_resursnery_hhk-i-qaxaqakan-npatakneri-hamar-en-ogtagortsyum.html). Միայն ԵՊՀ կանոնադրությունն է բացահայտորեն արգելում Ուսանողական խորհրդի նախագահին լինել քաղաքական կուսակցության անդամ: Տեղ.կայքում www.7or.am ԼԳ “Ուսանողական խորհրդի նախագահները՝ քաղաքական կուսակցության անդամներ: (<http://www.7or.am/am/news/view/15500/>).

Աղյուսակ 3: Հայտնի պետական բուհերի Խորհրդի (Կառավարման խորհրդի) նախագահները

Պետական Բուհ - եր	Խորհրդի նախագահ
ԵՊՀ	ՀՀ նախագահը
ԵՊԼՀ	ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը
Հայաստանի պետական Տնտեսագիտական համալսարան	ԱԺ նախագահը
Պետական Մանկավարժական ինստիտուտ	ՀՀ վարչապետը
Պետական Ճարտարագիտական համալսարան	ԱԺ նախկին նախագահը
Պետական Ագրարային համալսարան	ՔԾ խորհրդի նախագահը
Երևանի պետական բժշկական համալսարան	ԿԳ նախարարը
Պետական Կոնսերվատորիա	Ռուսաստանում Հայաստանի նախկին դեսպանը
Ճարտարապետական և Շինարարական պետական համալսարան	Երևանի քաղաքապետը
Հայաստանի ՖԿՆՍ պետական ինստիտուտ	ԱԺ –ում ներկայացված երկրորդ ամենամեծ կուսակցությունը
Գորիսի պետական Համալսարան	Սյունիքի մարզապետը

Վերցված է՝ Բուհերի պաշտոնական կայքերից:

41. **Ռեկտորների ընտրությունը ենթադրաբար մրցակցային է և տեսականորեն՝ ոչ քաղաքական, սակայն իրականում, կարծես թե, այն երթարկվում է մեծ քաղաքական ազդեցության:** Ռեկտորը ընտրովի պաշտոն է և ընտրվում է բաց մրցույթով, հինգ տարի ժամկետով, առավելագույնը երկու անընդմեջ ժամկետով կամ մինչև կենսաթոշակային տարիքին հասնելը՝ 65 տարեկան:⁵² Ըստ ԲԿՕ-ի և համալսարանների կանոնադրության՝ ոչ թե կառավարությունը, այլ համապատասխան բուհերի խորհուրներն են ընտրում ռեկտորներին: ՀՀ կառավարությունը հավանություն է տալիս առաջադրված ռեկտորին, որի հիման վրա ՀՀ ԿԳՆ-ը և ռեկտորները ստորագրում են հնգամյա պայմանագիր: Սակայն միշտ չէ, որ այդ կանոնները խստորեն կիրառվում են:⁵³ Այնպիսի տպավորություն կա, որ կառավարության կողմից ռեկտորների ընդունումը և ազատումը կատարվում է

⁵² ՊՈԱԿ-ի մասին օրենքի Գլուխ Բ, մաս 3, Հոդված 16-ով արգելվում է ռեկտորներին մնալ այդ պաշտոնին 65 տարեկանից հետո: Ագրարային Համալսարանը իր իրավաբանական կարգավիճակը ՊՈԱԿ –ից՝ հիմնադրամի փոխելուց հետո այլևս ՊՈԱԿ-ի մասին օրենքին չի ենթարկվում, այդպիսով ռեկտորը կարող է մնալ իր պաշտոնին կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո նույնպես: Այնուամենայնիվ, համալսարանը ենթարկվում է ԲԿՕ-ին և ռեկտորի վերընտրությունը սահմափակված է 2 անընդմեջ ժամկետով:

⁵³ Օրինակ՝ մի քանի դեպքեր են եղել, երբ ռեկտորները շարունակել են պաշտոնավարել կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ միջև ժամկետի լրանալը: Բացի դրանից, քանի որ պաշտոնավարման առավելագույնս 10 տարին սկսել է հաշվվել միայն 2002 կամ 2003 թթ-ից, երբ պետական բուհերը վերածվեցին ՊՈԱԿ –ի, որոշ ռեկտորներ կարող են պաշտոնավարել 10 տարուց ավելի, եթե դրանից առաջ նրաք այդ պաշտոնին արդեն եղել էին: Բուհերի մեծամասնության կանոնադրությունները պահանջում են, որ ռեկտորը լինի գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, սակայն այնպիսի փոքր բուհեր, ինչպիսին Կինոյի և թատրոնի պետական ինստիտուտն է, իջեցրել են այդ շեմը:

քաղաքական ազդեցություն տակ:⁵⁴ Օրինակ, այս ուսումնասիրության ընթացքում հարցված գրեթե բոլոր պետական բուհերը պատասխանել են, որ կառավարությունն է նշանակել իրենց ռեկտորներն՝ նշելով խորհրդում մի հզոր ներկայացուցչի և/կամ այլ ոչ պաշտոնյայի միջոցով կառավարության ազդեցությունը ռեկտորների ընտրության վրա: Ի դեպ, ուսումնասիրության ընթացքում մի պետական համալսարանի ռեկտոր ազատվեց պաշտոնից ՀՀ ԿԳՆ-ի, այլ ոչ թե համալսարանի խորհրդի կողմից: Այս ազատման օրինականությունը այժմ քննվում է դատարանում:

42. **Ռեկտորատը խորհրդակցական մարմին է, սակայն իրականում այն ընթացիկ և կարևոր ընթացակարգերի հզոր գործիք է:** Սովորաբար ռեկտորատը կազմված է ռեկտորից, պրոռեկտորներից, աշխատակազմի ղեկավարից, ֆակուլտետի ղեկաններից և գլխավոր հաշվապահից: Գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում այն զբաղվում է բոլոր հարցերով: Իր լիազորությունները հիմնականում սահմանում է իր որոշմամբ, որը ընդունվում է խորհրդի կողմից. օրինակ՝ ուսանողի հեռացման և վերականգնման, ղեկանների և անբիռների հաշվետվությունների քննարկում, գիտխորհրդի նիստերի օրակարգի կազմում և այլ հարցեր:

43. **Ակադեմիական հարցերը որոշող կարևորագույն պաշտոններում անձանց ընտրության գործընթացը բավականաչափ մրցակցային չէ:** Գիտական խորհրդը ստեղծված է համալսարանի ուսումնական հարցերում կարևոր դերակատարության նպատակով, բայց այն հաճախ զրված է արդյունավետ որոշումներ կայացնելու կարողություններից: Թեև չկան խորհրդի կազմի մասին խիստ կանոնները, ընդամենը մի քանի համալսարաններ են մասնավոր հատվածին ներգրավել մասնակցելու իրենց ուսումնական հարցերին, ինչպիսիք են օրինակ՝ ուսումնական ծրագրերի և դասընթացների ծրագրերի մշակումը, թեև դա դարձնում պրակտիկա չէ նույնիսկ ավելի առաջադեմ երկրներում: Ենթադրվում է, որ ղեկանները և ամբիոնի վարիչները, ինչպես նաև դասախոսները պիտի ընտրվեն բաց մրցութային կարգով, և արտաքին թեկնածուները նույնպես կարող են դիմել այդ պաշտոններին: Սակայն, իրականում, ընտրությունները հաճախ բաց են միայն ներքին թեկնածուների համար և ավելի քիչ մրցակցային են և հիմնականում առաջադրվում են ռեկտորի, պրոֆեսորադասախոսական կազմի և/կամ ուսանողների կողմից:

44. **Միջկառավարական բուհերի կառավարման պահանջները զգալիորեն տարբերվում են պետական բուհերի կառավարումից և հակված են լինել ավելի բաց և մրցունակ:** Ստորև բերվում են միջկառավարական բուհերի օրինակները.

(i) **Ռուս – հայկական (Սլավոնական) համալսարան (ՌՀՀ):**

⁵⁴ Բոլորը գիտեն, որ պետական բուհերի ռեկտորների 90 տոկոսը կուսակցության անդամներ են, հիմնականում՝ իշխող:

Կառավարման խորհուրդ

- Բարձրագույն ղեկավար մարմինը համալսարանի “կոնֆերանս” է, որը կազմված է ուսանողներից (25 տոկոս), դասախոսներից և աշխատակիցներից, և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներից: Կոնֆերանսը գաղտնի քվեարկությամբ ընտրում է ռեկտորին և գիտահետազոտական խորհրդին՝ 5 տարի ժամկետով: Համալսարանի կանոնադրությունը, նրանում փոփոխությունները և լրացումները իրականացվում են Կոնֆերանսի կողմից:
- Գիտահետազոտական խորհուրդը գործում է ինչպես Հայաստանի պետական բուհերի խորհուրդները: Ներկայումս այն կազմված է 44 անդամից, որոնց թվում՝ ԳԱԱ – ից և այլ բուհերից հրավիրված խումբն է (20 տոկոս), համալսարանի վարչակազմը (21 տոկոս), ֆակուլտետների ղեկավարները (12 տոկոս), ուսանողները (12 տոկոս) և դասախոսական կազմը (35 տոկոս):
- Հոգաբարձուների խորհուրդը կազմված է 19 անդամից, այդ թվում՝ 14-ը Ռուսաստանի Դաշնությունից են: Խորհուրդը հաստատում է համալսարանի նորմատիվներն ու կանոնակարգերը:

Ռեկտոր

- Հայագգի է
- Նախ երեք թեկնածուներ են առաջադրվում ՀՀ ԿԳՆ-ի և Հոգաբարձուների խորհրդի կողմից, այնուհետև՝ ՌԴ ԿՆ-ի կողմից, որից հետո փակ ընտրությունը կատարվում է Հոգաբարձուների խորհուրդի կողմից:
- Ընտրական ընթացակարգերի մանրամասները սահմանվում են գիտական խորհրդի կողմից:

(ii) Հայաստանի ամերիկյան համալսարան

Կառավարման Խորհուրդ

- **Կազմը.** Հոգաբարձուների խորհուրդը կազմված է յոթ անդամից, այդ թվում՝ երկու ներկայացուցիչներ նշանակվում են կառավարության և հինգը՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարան Կորպորացիայի կողմից:
- **Ժամկետները.** Երեք տարի, վերընտրման իրավունքով:
- **Նախագահը.** Նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Պրեզիդենտը

- Պրեզիդենտը նշանակվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից:

45. **Տեղական մասնավոր բուհերի կառավարման կառուցվածքը ընհանրապես չի կարգավորվում:** Ինչ վերաբերում է տեղական մասնավոր բուհերին, ապա բոլոր ռեկտորները այդ բուհերի հիմնադիրներն են և սովորաբար նշանակվում են հիմնադիրների խորհրդի կողմից՝ առանց պաշտոնավարման ժամկետի սահմանափակման: Ռեկտորներն իրենց սահմանափակ շրջապատի հետ հաճախ

թելադրում են համալսարանի կառավարման և ղեկավարման և, մասնավորապես, բյուջեին վերաբերող որոշումները: Այս ուսումնասիրության ընթացքում մի մասնավոր համալսարանում հարցազրույցից իմացանք, որ այնտեղ ներկայումս դիտարկվում է ռեկտորի ընտրության ընթացակարգի ներդրման հարցը, և ընդունում են, որ կառավարող մարմնը ավելի շատ պիտի ներկայացված լինի ուսանողներով և դասախոսներով: Եթե դա տեղի ունենա, ապա դա կլինի Հայաստանում առաջին մասնավոր բուհը, որտեղ ռեկտորի պաշտոնը ընտրովի է:

3.1.2 Ակադեմիական ինքնավարություն

46. Չնայած կրթության մասին օրենքներով լիազորված ակադեմիական ազատություններին, իրականում բուհերը մեծ հաշվով հետևում են ԿԳՆ-ի կողմից հաստատված ուսումնական ծրագրերի և դասավանդման գործընթացների պետական կրթական չափորոշիչներին: ԲԿՕ – ը (հոդվածներ 6, 19) և Կրթության մասին օրենքը (հոդված 28) բուհերին տալիս են ինքնավարություն և ակադեմիական ազատություններ՝ իրենց ուսումնական ծրագրերը և դասավանդման գործընթացը զարգացնելու և դասընթացներ կազմակերպելու ու այլ բուհերի հետ գործընկերանալու համար: Սակայն, իրականում, կառավարության լրացուցիչ որոշմամբ ⁵⁵ բուհերից պահանջվում է, որ հիմնականում հետևեն ուսումնական ծրագրի և դասավանդման գործընթացների պետական կրթական չափորոշիչներին, որոնք ԿԳՆ-ի պատվերով մշակվել են հեղինակավոր բուհերի ⁵⁶ և այլ գիտական կազմակերպությունների կողմից, ներկայացվել են ԿԳՆ-ի կողմից ստեղծված փորձագիտական հանձնաժողովին և հաստատվել են ԿԳՆ-ի կողմից ⁵⁷: Որոշման մեջ սահմանվում է նաև «առնվազն չորս տարի բակալավրական ծրագրի» ուսման տևողությունը, այլ ոչ թե ժամաքանակը և ուսուցման արդյունքները, որը համահունչ կլիներ Բոլոնիայի գործընթացին: Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունը և Լեզվի մասին օրենքը պահանջում են Հայաստանի համալսարաններից դասավանդումը կազմակերպել հայերեն լեզվով, բացառությամբ օտարերկրյա ուսանողներին առաջարկվող դասընթացների: Հետևաբար, գոյություն ունեցող պետական չափորոշիչները ընդհանուր առմամբ սահմանփակում են բազմազան, նորարարական և մրցունակ ուսումնական ծրագրեր առաջարկելու բարձրագույն կրթական համակարգի ակադեմիական ազատությունները:

⁵⁵ Կառավարության որոշում թիվ 24, *Բարձրագույն և պրոֆտեխնիկական կրթության պետական չափորոշիչների մասին*, հունվար 16, 2001.

⁵⁶ Բնչպես ԵՊՀ -ը, ՀՊՄԻ -ը և ԵՃԱՇՊՀ -ը

⁵⁷ Սկզբում ստանդարտները հաստատում էր կառավարությունը, և ոչ թե ԳՀՆ, ըստ Հավելված 1, Կառավարության N24 որոշմամբ, հունվար 16, 2001. Այնուհետև այն տրվել է ԳԿՆ -ին, Կառավարության N 449-N որոշմամբ, ապրիլ 14, 2009. Զինվորական (այդ թվում զին. բժշկության) և ոստիկանության ծրագրերի ստանդարտները հաստատվում են ԿԳՆ-ի կողմից համապատասխան իրավասու մարմնի նախնական համաձայնությամբ (ՊՆ և ՀՀ Ոս.): Ոչ բոլոր ծագրերի համար կան ստանդարտներ. Օր.՝ չկան ԿԳՆ հաստատված ստանդարտներ տեղեկատվական և ԲՏ մասնագիտությունների համար, մասնավոր բուհը մշակել է իր սեփական ծրագիրը մի առաջատար բուհի ծրագրի հիման վրա:.

47. **Բուհերը զրկված են յուրաքանչյուր մասնագիտության համար ուսանողների թվաքանակը որոշելու ինքնավարությունից:** Ընթացակարգի համաձայն բոլոր պետական և մասնավոր բուհերը ԿԳՆ-ի հաստատմանն են ներկայացնում յուրաքանչյուր մասնագիտության համար պետպատվերով և վճարովի տեղերի քանակը և տեղական, և օտարերկրյա ուսանողների համար: Կարող է թվալ այնպես, թե բուհերը ազատ են որոշելու ուսանողական տեղերի քանակը, սակայն, իրականում, հայտերը ներկայացվում են հիմնականում նախորդ տարվա թվի համաձայն, որը որոշված էր գերմասնագիտացված պետական կրթաթոշակների տեղաբաշխման հիման վրա և բաղդատված էր հիմնականում ըստ առկա հարմարությունների, լիցենզավորման պահանջների, ինչպիսիք են օրինակ՝ տարածքը, ենթակառուցվածքները, ռեսուրսները և այլն: Ներկայումս կառավարությունը կրթաթոշակներ է սահմանում ավելի քան 200 բացառիկ մասնագիտացված ոլորտների համար, և յուրաքանչյուր մասնագիտության համար հատկացված կրթաթոշակների քանակը տատանվում է 2-ից մինչև 60-ը:⁵⁸ Ընդհանուր առմամբ, բուհերը կարող են լրացուցիչ տեղերի հայտեր ներկայացնել միայն իրենց ֆիզիկական հարմարությունները ընդլայնելուց հետո: ԿԳՆ-ի կողմից մասնագիտությունների քանակը հաստատելուց հետո ամեն տարի, մինչև բուհական ընդունելության քննություններին, կառավարություն որոշման է կայացվում, և այդուհետև փոփոխություններ չեն կարող կատարվել, բացառությամբ նույն ֆակուլտետի մասնագիտություններից: Մյուս կողմից էլ, որոշ դեպքերում, կառավարությունը կարող է ԿԳՆ-ի կողմից տրված արտոնագրի հիման վրա բուհին թույլատրած որոշ տեղեր չեղյալ հայտարարել: Բացի այդ, ԿԳՆ-ը կարող է իր հայեցողությամբ թույլատրել բուհին ավելի մեծ թվով ուսանողներ ընդունել՝ ընդունելության քննությունների ավելի ցածր անցողիկ գնահատականներով:

48. **Արդարություն ու թափանցիկություն ապահովելու համար կառավարությունն ունի պետական բուհերի ընդունելության խստորեն կանոնակարգվող քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք վերջերս տարածվում են նաև մասնավոր բուհերի վրա:**⁵⁹ Բուհական միասնական ընդունելության քննությունները (ավագ դպրոցի ավարտական քննությունների հետ) ներդրվել են 2005թ.-ին՝ բուհական ընդունելության գործընթացը դարձնելով ավելի արդար և թափանցիկ: Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից անցկացված քննությունների արդյունքների և դիմորդների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա ԿԳՆ-ը որոշում է, թե դիմորդը կարող է արդյոք ընդունվել պետական բուհի տվյալ մասնագիտական բաժին, թե ոչ: Պետական բուհերի ընդունելության հանձնաժողովների դերը, որոնք մինչև միասնական քննությանների համակարգին անցնելը պատասխանատու էին իրենց բուհերում ընդունելության քննություններ

⁵⁸ *Higher Education Financing Strategy*, approved by Կառավարության որոշմամբ N 25 dated June 30, 2011.

⁵⁹ Government Decree N700-N dated April 28, 2011.

անցկացնելու համար, այժմ սահմանափակվում է միայն վարչական աշխատանքներով, օրինակ՝ ստուգում են դիմորդների հանձնած փաստաթղթերի փաթեթները: Բուհերը որևէ այլ գործոն հաշվի առնել չեն կարող և միայն պարտավոր են ընդունել բակալավրի առկա /ստացիոնար/ ծրագրի համար դիմած ուսանողներին, ովքեր՝ ելնելով պետական միասնական քննությունների արդյունքներից և ուսանողների նախասիրություններից, ընդունվում են տվյալ բուհ տվյալ ծրագրում սովորողու համար:⁶⁰ Ինչ վերաբերում է բակալավրի և մագիստրոսի հեռակա ծրագրերին, ապա, սովորաբար, յուրաքանչյուր բուհ ինքն է սահմանում է իր առարկաներն ու անցողիկ գնահատականները և ընդունելության պահանջները: Մինչև 2011 թ-ը մասնավոր բուհերը միանգամայն ազատ էին իրենց ընդունելության քաղաքականության մեջ և ընդունելության քննությունները իրենք էին կազմակերպում: Սակայն այդ պրակտիկան 2012 թ-ին փոխվեց:⁶¹ Ըստ պետական ընդունելության հանձնաժողովի որոշման, մասնավոր բուհերում (բացի միջկառավարական համալսարաններից և մյուս երկու միջպետական համալսարանները) բակալավրական առկա ծրագրերի համար (բացի մագիստրոսական ծրագրերից և հեռակա բաժնի ուսանողներից) դիմորդներից նույնպես պահանջվում է հանձնել միասնական պետական քննություններ: Այս նոր պահանջի արդյունքում մասնավոր բուհեր ընդունվող ուսանողների քանակը 2012 թ-ին կտրուկ ընկավ՝ հասնելով 72-ի, նախորդ տարիների մի քանի հազարի համեմատ:

49. Գործող օրենսդրությունը ոչ թույլ է տալիս, ոչ էլ խրախուսում է բուհերին ակտիվորեն զբաղվել գիտական հետազոտությամբ և ստեղծագործական աշխատանքով: ՊՈԱԿ-ի մասին օրենքը սահմանափակում է բուհերի առևտրային գործունեությունը միայն այնքանով, որքանով այն թույլատրված է իրենց կանոնադրություններով: Մա նշանակում է, որ եթե հետազոտական աշխատանքը ընդգրկված չի բուհի կանոնադրության առևտրային գործունեության ցանկում, ապա բուհին թույլ չի տրվում զբաղվել հետազոտական աշխատանքներով, չնայած այն հանգամանքին, որ մի շարք իրավական ակտերով բուհերը պարտավոր են զբաղվել հետազոտական գործունեությամբ՝ որպես իրենց հիմնական խնդիրներից մեկը: Բացի այդ, Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքը հստակորեն չի սահմանում, թե ով է հանդիսանալու գիտական աշխատանքի արդյունքի սեփականատերը⁶², որն, իր հերթին, այնքան էլ չի խթանում բուհերին և գիտաշխատողներին հետազոտության մեջ ներդրումներ կատարել նույնիսկ այն ոլորտներում, որտեղ նրանց թույլատրված է դա անել:

⁶⁰ Մագիստրոսական ծրագրերում ընդունելությունը կատարվում է բուհերի կողմից, ըստԿԳՆ-ի կողմից մշակված կարգի:

⁶¹ Պետական և մասնավոր բուհերի Բակալավրական ծրագրերում ընդունելության կարգը հաստատելու մասին Կառավարության 26.04.2012թ. որոշումը: (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75964>).

⁶² See Article 18 of the Law on Scientific and Scientific-Technical Activities (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67725>).

50. Միջկառավարական և միջպետական համալսարանները ենթարկվում են իրենց գործընկեր երկրների և համալսարանների կողմից մշակված ուսումնական ստանդարտներին և կանոնակարգերին: Ընդհանուր առմամբ, միջկառավարական և միջպետական բուհերն ավելի շատ ակադեմիական ազատություններ ունեն, քան Հայաստանի տեղական համալսարանները, բացառությամբ Սլավոնական համալսարանի (ՌՀՀ), որը ենթարկվում է ռուսական ուսումնական չափորոշիչներին: Հայաստանի ամերիկյան համալսարանի դեպքում, այն Ուսումնական ծրագրի հանձնաժողովի կողմից կատարվող շարունակական ինքնավերլուծության միջոցով մշակում, վերանայում և թարմացնում է առարկայական և ուսումնական ծրագրերը՝ հաշվի առնելով ԱՄՆ Հավատարմագրման գործակալություն «վերանայման չափանիշները» (CFRs): Հետևաբար, կառավարությունը չի միջամտում նրա առարկայական և ուսումնական ծրագրերի մշակման գործին: ՌՀՀ-ի դեպքում, այն հետևում է ՌԴ-ի ազգային կրթության չափորոշիչների կողմից սահմանված նվազագույն պահանջներին, ըստ Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունների միջև կնքված համաձայնագրի:⁶³ Համալսարանում նոր ծրագրերի ներդրման դեպքում հիմնական մասնագիտական առարկաները (օրինակ, տնտեսագիտություն) ենթակա են Ռուսաստանի կրթության նախարարության հավանությանը և լիցենզավորմանը, սակայն համալսարանն ազատ է առանց վերոհիշյալ հաստատման որոշելու իր ենթաառարկայական ծրագրերը (օրինակ՝ բանկեր, Ֆինանսներ և աուդիտ, մակրոտնտեսագիտություն և այլն): Դասընթացների տեսակները նույնպես սահմանվում են չափորոշիչներով:

3.1.3 Մարդկային ռեսուրսների կառավարման ինքնավարություն

51. ԲԿՕ-ը նախատեսում է մարդկային ռեսուրսների կառավարման լայն ինքնավարություն, սակայն դա տակավին չի նշանակում, թե բուհերը բավարարար կարողություններ ունեն իրենց անձնակազմին արդյունավետ կառավարելու համար: Բուհերն ամբողջությամբ ազատ են որոշելու իրենց մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը, այդ թվում՝ որոշել կադրային կարիքները, մշակել ընթացակարգեր և վարչակազմի և դասախոսական կազմի ընտրություններ անցկացնել և ընտրություն կատարել: Սակայն նման մակարդակի ինքնավարությունը պարտադիր չէ, որ կհանգեցնի ՄՌ-ի արդյունավետ կառավարմանը: Այսպես օրինակ, պետական բուհերի մեծ մասը կատարողական ցուցանիշների գնահատման համակարգ չունի հիմնականում այն պատճառով, որ նրանք չեն հասկանում մարդկային ռեսուրսների կառավարման գործառնությունները: Շատ բուհեր հակված են պահելու օգնականների և խորհրդականների մեծ բանակ, որոնց ներդրումը

⁶³ Ռուսաստանի օրենքով ՌԴ նախագահի հրամանով որոշված որոշ առաջատար համալսարաններ պետք է ուսումնական ստանդարտներ սահմանեն (<http://www.zakonrf.info/zakon-ob-obrazovanii/7/>).

հիմնականում էական չէ: Ինչպես արդեն նշել ենք, իրականում կադրերի ընդունման գործընթացը շատ բուհերում մրցակցային և թափանցիկ չէ: Պարզվում է, որ պետական բուհերի մեծամասնությունը կադրերի արդյունավետ կառավարման համակարգ չունի, որով կարող էր զգալիորեն բարելավել կրթության որակը: Ի տարբերություն պետական բուհերի, Ամերիկյան համալսարանում կադրերի ներգրավման և նշանակման գործընթացը ապահովում է բարձրորակ կադրերի համալրումը: (տես Ներդիր 8)

Ներդիր 8

Հայաստանի ամերիկյան համալսարան. Նշանակման, պահպանման, առաջխաղացման և դասախոսական կոչումների քաղաքականությունը

ՀԱՀ-ը ունի համալսարանում դասախոսական կազմի գործունեությանը վերաբերող նշանակման, պահպանման, առաջխաղացման և դասախոսական կոչումների շնորհման քաղաքականություն, որով սահմանվում են նշանակման և առաջխաղացման ու պահպանման սկզբունքները, ընթացակարգերը, չափանիշները: Դասախոսական Մենասը ուղեցույց է մշակում այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են օրինակ՝ դասախոսների մասնագիտական ստուգման չափանիշների (օր.՝ ծառայություններ համալսարանին և հանրությանը, ուսուցման գերազանցություն և ստեղծագործական կրթաթոշակ) և չափման ցուցիչների հիման վրա, հաշվի առնելով ուսումնական ծրագրի ընթացքում ցուցաբերած հետևողականությունը և արդարությունը:

Դասախոսական կազմի համալրման նպատակով յուրաքանչյուր ակադեմիական ծրագիր դեկանի կողմից նշանակված մի որոնման հանձնաժողով է կազմում լրիվ դրույքով դասախոսներ որոնելու համար: Որոնումը չի կարող սկսել առանց պրոռեկտորի հաստատման: Դասախոսական կազմի որոնման ամբողջ պատասխանատվությունը դրված է հանձնաժողովի վրա, և համալրման գործնառնքի համակարգվում է ՀԱՀԿ գրասենյակի /Օքլանդ, Կալիֆորնիա/ միջոցով: Որոնման հանձնաժողովը ուսումնական ծրագրի վերաբերյալ առաջարկություններ է անում դեկանին և դասախոսական կազմին: Առաջարկության մեջ նշվում են նաև լավագույն թեկնածուների վարկանիշները: Ուսումնական ծրագիրը լավագույն թեկնածուի վերաբերյալ որոշումը կայացնում է պաշտոնական նիստի վիճոցով: Ուսումնական ծրագրի դեկանը և դասախոսական կազմը պարտավոր են բաց և մանրակրկիտ որոնումներ անցկացնել յուրաքանչյուր դասախոսական տեղի համար՝ լավագույն թեկնածուին որոշելու նպատակով: Որոնման հանձնաժողովի նախագահը նշանակված յուրաքանչյուր դասախոսի վերաբերյալ բաց և մանրակրկիտ որոնումների անցկացման ապացույցներ է ներկայացնում դեկանին կամ բացատրում է, թե որոնք են եղել արագացված գործընթացի կիրառման դրդապատճառները: Այս բացատրությունները դեկանի կողմից հարգելի համարելու դեպքում, թեկնածուի բոլոր նյութերով հանդերձ, ուղարկվում են Նշանակման և առաջխաղացման հանձնաժողով: Նշանակման և առաջխաղացման հանձնաժողովը Դասախոսական Մենասի մարմին է:

Պրոֆեսորի, դոցենտի կամ ավագ դասախոսի աստիճանի նշանակման համար առաջարկությունը կատարվում է դեկանի կողմից՝ պրեզիդենտին ողոված գրավոր նամակով: Դեկանը պարտավոր է գրավոր իրազեկել ընտրությունից դուրս մնացած թեկնածուներին: Իրենց ուսումնական ծրագրերում, համալսարանում և համայնքում բոլոր պրոֆեսորներից մեծ պատասխանատվություն է ակնկալվում:

Նշանակման և առաջխաղացման հանձնաժողովի կողմից բոլոր ընթացակարգերի օրինականությունը և չափանիշների կիրառումը հավաստելուց հետո բոլոր նշանակումները կատարվում են պրեզիդենտի կողմից: Նշանակումները կատարվում են մեկ ուսումնական տարվա համար, սակայն պրեզիդենտի հավանության առկայության դեպքում պայմանագրի ժամկետը կարող է ավելի երկար լինել:

Ներկայումս ՀԱՀ-ը առաջխաղացման համար մշտական/ժառանգվող պաշտոնի համակարգ չի կիրառում և չի շնորհվում: Դասախոսների առաջխաղացման գործընթացը սկսվում է դուայեից: Դուայեն պարունակում է մտադրության մասին նամակ, սույն քաղաքականության «նշանակման և առաջխաղացման չափանիշներ» բաժնում սահմանված չափանիշների հիման վրա՝ ձեռքբերումների մասին գրավոր հայտարարություն, ինքնակենսագրություն, նույն բուհի, այնպես էլ այլ հաստատությունների դասախոսների կողմից տրված երաշխավորագրեր, հրապարակված հոդվածներ և դասավանդման որակը հավաստող նյութեր: Դուայեն ներկայացվում է ուսումնական ծրագրի ղեկանին, և ղեկանը դասախոսական կազմի նիստ է գումարում, որը քննարկում և գնահատում է առաջխաղացման դիմումը և ընդունման կամ մերժման որոշում է կայացնում: Ուսումնական ծրագրի դասախոսական կազմի որոշումը այնուհետև փոխանցվում է նշանակման և առաջխաղացման հանձնաժողովին, որը պրոռեկտորի նախագահությամբ քննում է առաջխաղացման դիմումը, դրական կամ բացասական որոշում է կայացնում և ուսումնական ծրագրի և հանձնաժողովի որոշումները փոխանցում է պրեզիդենտին: Առաջխաղացման նպատակով ներկայացված դուայեն քննող հանձնաժողովը պետք է կազմված լինի ավելի բարձրաստիճան դասախոսներից, քան առաջխաղացման համար դիմող դասախոսինն է: Նշանակման վերջնական որոշումը կայացնում է ՀԱՀ – ի պրեզիդենտը:

52. **Պետական բուհերը միանագայն ազատորեն կարող են որոշել իրենց աշխատակիցների վարձատրության չափը, սակայն քչերն են վարձատրում՝ ելնելով կատարողական ցուցանիշներից:** ԲԿՕ – ի Հոդված 25-ով բուհերին թույլ է տրվում “ինքնուրույնաբար որոշել աշխատանքի վարձատրության ձևն ու համակարգը, լրացուցիչ վճարների չափը, հավելավճարները, պարգևավճարները, նյութական խրախուսման այլ միջոցները, ինչպես նաև բոլոր աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը՝ առանց աշխատավարձի առավելագույն չափը սահմանելու:” Աշխատավարձեր և այլ նպաստներ սահմանելու ինքնավարությունը իսկապես կիրառվում է, և այդ փաստը հաստատվել է բոլոր հարցվողների կողմից: Օրինակ, մանկավարժական համալսարանը 2011 թ. բարձրացրել է գիտամանկավարժական անձնակազմի աշխատավարձը 40 տոկոսով և սկսել է հավելավճարներ տրամադրել օտար լեզուների իմացության համար: Սովորաբար պետական բուհերը աշխատակիցների աշխատավարձի չափը որոշում է ելնելով գիտական որակավորումից, ընդհանուր աշխատանքային ստաժից, տվյալ բուհում աշխատանքային ստաժից, սակայն քչերն են հաշվի առնում կատարողական ցուցանիշները: Բացառություններից մեկը Երևանի պետական լեզվաբանական համալսարանն է, որը վերջերս մշակվել կատարողականի գնահատման մի մատյան, և աշխատակիցները սկսել են վարձատրվել այդ մատյանի հիման հրա: Համեմատության կարգով նշենք, որ Սլավոնական համալսարանում մշակվել է “Գիտամանկավարժական անձնակազմի աշխատանքի տարբերակված վճարների կարգ”, որով լրացուցիչ վճարներ է նախատեսվում պաշտոնի, գիտաաշխատողների և արտաժամյա/լրացուցիչ աշխատանքի համար: Համալսարանը որոշել է հաշվի առնել ոչ միայն ակադեմիական ծարնրաբեռնվածությունը, դասաժամերը, այլ նաև խթանել

բարձրորակ հետազոտական և գիտական աշխատանքը, ինչպես նաև աշխատողների կատարողական ցուցանիշները:

3.1.4 Ֆինանսական ինքնավարություն

53. ԲԿՕ –ը Հայաստանի բուհերին տալիս է լայն ֆինանսական ինքնավարության, սակայն իրականությունը բոլորովին այլ է՝ գանազան կանոնակարգերի և միջոցների բացակայության պատճառով: Ըստ ԲԿՕ–ի՝ բուհերը կարող են սահմանել վճարովի տեղերի ուսման վարձի չափը և աշխատողների աշխատավարձն ու պարգևավճարները, պարտատոմսեր թողարկեն, անշարժ գույք գնեն և տնօրինեն, տնօրինեն խնայողություններին և սեփական եկամուտներ ունենան և ուսումնական վճարովի ծառայություններ մատուցեն: Սակայն իրականությունը միանգամայն այլ է: Առաջինը, մի կողմից պետական բուհերից չի պահանջվում ներկայացնել իրենց բյուջեները՝ կառավարության հաստատմանը, իսկ մյուս կողմից էլ նրանք պետք այն ներկայացնեն ԿԳՆ–ին, որը բխում է հավանություն տալու պահանջներից, քանի որ ըստ ՊՈԱԿ–ի օրենքի ԿԳՆ–ը և կառավարությանը թույլ է տրվում չեղյալ համարել Խորհրդի կողմից ընդունված որոշումը: Երկրորդը, չնայած ԲԿՕ–ը թույլ է տալիս բուհերին ուսման վարձ սահմանել, իրականում, կառավարության Գնահատման և թեստավորման կերտրոնը պաշտոնապես հայտարարում է յուրաքանչյուր տարի յուրաքանչյուր մասնագիտության համար պետական բուհերի ուսման վարձի մակարդակները, որոնց, որպես կանոն, պետական բուհերը հետևում են:⁶⁴ Հատկանշական է, սակայն, որ այս հետազոտությունը չի դիտարկել պետական բուհերի կողմից որևէ բողոք, որն առնչվեր ուսման վարձի սահմանման ինքնավարության հետ կապված խնդիրներին: Երրորդը, պետպատվերով սովորող ուսանողներին կառավարության կողմից հատկացված կրթաթոշակները, որպես կանոն, շատ ավելի ցածր են, քան փաստացի ծախսերը, սակայն պետական բուհերը չեն կարող պետպատվերով սովորող ուսանողներից վճարներ գանձել և ստիպված են բարձրացնել ուսման վարձը:⁶⁵ Չորրորդը, որոշ համալսարանների կանոնադրությունները (օրինակ, Ագրարային Համալսարանը, Երևանի պետական լեզվաբանական համալսարանը) սահմանում են, որ “վարձակալության տրված պետական գույքից առաջացած հասույթը ուղղվում է պետական բյուջե”, և նրանք, իսկապես, հրաժարվում են այդ եկամուտներից՝ հոգուտ պետությանը: Հինգերորդը, ՊՈԱԿ–ի օրենքը արգելում է պետական բուհերին գրավադրել իրենց ակտիվները, և օրենքի Հոդված 22–ով սահմանված գումարը գերազանցող արժեքով գույք գնելու

⁶⁴ 2012-2013 ուս.տարվա Պետական բուհերի մասնագիտությունների ցանկը և դրանց ուսման Վարձի չափը, Բակալավրական ծրագիր http://atc.am/files/2012%20dimord/masn_cucak.pdf

⁶⁵ Պետպատվերով ուսանողների կրթաթոշակի չափը որոշելիս և հատկացնելիս պետությունը օգտագործում է մեկ միավորի գնի հաշվարկի հնացած նորմատիվներ: World Bank, 2008, *Education Public Expenditure Review*. See Annex 1 for Methodology for calculating the amount of state scholarships for university students.

դեպքում պետական բուհերից պահանջում է ստանալ ԿԳՆ-ի թույլատրությունը: ⁶⁶ Վեցերորդը, ՊՈԱԿ-ի օրենքը թույլ է տալիս կառավարությանը կամ ԿԳՆ-ին որոշել, թե ինչպես են օգտագործվելու բուհերի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները (հոդված 17, կետ բ): Յոթերորդը, բուհերը օրենքով պարտավոր են պարտադիր սոցիալական վճարներ կատարել կենսաթոշակային հիմնադրամներին (հոդվածներ 3 և 4) յուրաքանչյուր աշխատողի համար, անկախ նրա աշխատանքային ժամերի քանկի, որը կես դրույքով աշխատողների հաշվով շատ թանկ է նստում բուհի վրա: ⁶⁷ Վերջապես և, հավանաբար, ամենակարևորը, հաշվի առնելով սահմանափակ պետական ծախսերը և ծանր կախվածությունը ուսման վարձերից, բոլոր պետական բուհերի հիմնական գործողությունը վտանգված է, և շատ քիչ տեղ է մնում ֆինանսական ինքնավարություն իրականացնելու համար:

54. **ՊՈԱԿ – ի մասին օրենքը շատ պետական բուհերի խստորեն կաշկանդում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ սահմանափակելով նրանց հնարավոր եկամուտները:** Ինչպես նշված է վերրում, ՊՈԱԿ-ի մասին օրենքը սահմանում է, որ ՊՈԱԿ-ները կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքերում և գործունեության տեսակներով, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով և հիմնադրի որոշմամբ, այսինքն՝ կանոնադրությամբ: Այն այնուհետև սահմանում է, որ "պետական կազմակերպության գործունեության արդյունքում ստացված հասույթը օգտագործվում է կանոնադրությամբ նախատեսված նպատակներով: Հիմնադիրը սահմանում է պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը" (հոդված 6, կետ 2): Քանի որ կանոնադրությունը և դրանում փոփոխությունները ենթակա են հաստատման հիմնադրի (կառավարությունը) կամ նրա լիազորված պետական մարմնի կողմից (հոդված 13), դա, ըստ էության, նշանակում է, որ բուհերը կարող են զբաղվել միայն կառավարության կողմից հաստատված գործունեությամբ: Սա կարող է լավ է որոշ պետական բուհերի համար, սակայն շատերի համար՝ ոչ: Օրինակ՝ Երևանի պետական բժշկական համալսարանի կանոնադրությունը ⁶⁸ թույլ է տալիս համալսարանին զբաղվել մի շարք բիզնես ոլորտներով, բայց շատ ուրիշները նման ճկունությունից զուրկ են: Մինչ Բժշկական համալսարանն իր եկամուտների 19 տոկոսը վաստակում է այլ աղբյուրներից (ոչ պետական ֆինանսավորումից և ուսման վարձից), և ճարտարապետական և շինարարական համալսարանը՝ 28 տոկոսը, երկու մարզային մանկավարժական բուհերը վաստակում են մեկ տոկոսից էլ պակաս, և նույնիսկ Երևանի պետական համալսարանի այլ աղբյուրներից ստացած եկամուտը կազմում է 9 տոկոս միայն: Ագրարային համալսարանի ՊՈԱԿ-ից՝ Հիմնադրամին անցնելու իրավական կարգավիճակի վերջին փոփոխությունը հենց վերոհիշյալ

⁶⁶ Գումարը կախված է արդեն առկա բուհի ֆին.հաշվետվության սեփական ակտիվների չափից: Կառավարության որոշմամբ 1648, նոյեմբեր 27, 1993 արգելում է ՊՈԱԿ –ին վարկ վերցնել կամ տալ (կետ 2. Ա) (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11642>).

⁶⁷ Տես օրենքի հոդված.5-րդ աղյուսակը <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76779>

⁶⁸ Ընդունվել է կառավարության կողմից, սեպտեմբեր 15, 2005, N 1716-Ն.

սահմանափակումների ապացույցն է: Համալսարանի աշխատակազմի բառերով. <<Իրավական կարգավիճակի փոփոխությունը համալսարանին հնարավորություն է տվել դիվերսիֆիկացիներու ֆինանսավորման աղբյուրները>>:

3.2 Հաշվետվողականություն

55. **Հաշվետվողականությանը կարելի է գնահատել տարբեր հարթություններում:** Հարցաթերթիկների և SABER-ի գործիքների միջոցով այս ուսումնասիրությունը գնահատել է համալսարանների հաշվետվողականությունը՝ արժեքային համակարգի (քննությունների արդարությունը և թափանցիկությունը, ուսանողների գնահատականը և դասախոսների աշխատնքի գնահատումը, կարիերայի զարգացումը, դասավանդման և ուսուցման ներքին որակի ապահովումը), ֆինանսական ամբողջականության (ֆինանսական կառավարման, ծախսերի և գնումների արդյունավետությունը և թափանցիկությունը), հաստատության առաքելությունների և նպատակների և դրանց ձեռքբերումների, ներքին և արտաքին գնահատման արդյունքների, վերահանձնումների քանակի և աշխատաշուկայում շրջանավարտների անցած ուղուն հետևելու և որոշումների կայացման գործում շահակիցների մասնակցության հրապարակայնության և թափանցիկության տեսակետից: Հայաստանում հաշվետվողականության ազգային ուղեցույց չկա, սակայն ՈԱԱԿ – ի կողմից վերջերս մշակված ինքնավերլուծության չափանիշները և չափորոշիչները կարող են ծառայել որպես հաշվետվողականության ստուգաթերթիկ (տես Ներդիր 9):

Ներդիր 9

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ՈԱԱԿ –ի ինքնավերլուծության չափորոշիչները

ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

ՈԱԱԿ -ը սահմանում է պետական հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները, որոնք բուհերի ինքնավերլուծությանը ծառայում են որպես հիմք և շրջանակ: Բուհերի ցուցանիշները գնահատվում են հետևյալ յոթ չափորոշիչներով.

- (i) ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը բոլորնապես են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները;
- (ii) ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը;
- (iii) ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելության ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ;
- (iv) ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա;
- (v) Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում);
- (vi) ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, և
- (vii) ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Վերցված է՝ ՈԱԱԿ – ի Հավատարմագրման Ձեռնարկ

3.2.1 Առժեքային համակարգը

56. **Ընդհանուր առմամբ արժեքային համակարգը վտանգված է:** Ինչպես արդեն նշվել է, կոռուպցիայի վերաբերյալ հասարակական ընկալումը կրթության ոլորտում՝ ընդհանրապես և բարձրագույն կրթության ոլորտում՝ մասնավորապես, բացասական է: Զանազան հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև շնջանառվող անեկդոտները վկայում են անբարո այնպիսի վարքագծերի մասին, ինչպիսիք ողջ բարձրագույն կրթության համակարգում գերակայող քննությունների կեղծումն է: Կոռուպցիայի դեմ պայքարելու համար, 2011 թ-ին, համազգային հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում բոլոր բուհերից, ի թիվս այլ պետական մարմինների և կազմակերպությունների, պահանջվում է մշակել հակակոռուպցիոն

ռազմավարություն:⁶⁹ Թեև բոլոր պետական բուհերը, գոնե ձևականորեն, մշակել են այնպիսի ռազմավարություն, նրանցից ոմանք մյուսներից առավել ջանքեր են գործադրում կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Այս ուսումնասիրության շրջանակում հարցված 10 պետական բուհերից կեսը ստանդարտացված պատժամիջոցներ են կիրառում քննությունների կեղծման համար և յոթը՝ դասախոսների անբարո վարքագծի համար (քննությունների վաճառք, ընտանեվարություն) և ընդունելության չափանիշների անհամապատասխանության համար: Ֆրանսիական համալսարանից վերջերս հեռացվել է դասախոսների մի մեծ խումբ՝ անբարո վարքագծի և ընդունելության քննությունների անցկացման պահանջներին չհետևելու համար: Նրանք մինչև քննությունները դիմորդներին էին տրամադրել քննական հարցերը և այլ գաղտնի տեղեկություններ: Այն կոնկրետ միջոցներ է ձեռնարկում ուսանողների և դասախոսների մոտ նման վարքագիծը նվազեցնելու նպատակով:

3.2.2 Ֆինանսական ամբողջականություն

57. Պետական բուհերը կատարում են ամենամյա աուդիտի պահանջները, սակայն այն սահմանափակվում է միայն ֆինանսական աուդիտով, և ծախսերի արդյունավետության վերաբերյալ տեղեկություններ չեն տրամադրվում: Ներքին աուդիտի մասին 2010 թվականին ընդունված օրենքով⁷⁰ բոլոր ՊՈԱԿ-ներից պահանջվում է ստեղծել ներքին աուդիտի ծառայությունների բաժիններ: Այդուհանդերձ, պետական բուհերից ոչ մեկը նման բաժին չի ստեղծել, քանի որ ըստ ԿԳՆ-ի հրահանգի՝ պետական բուհերի ներքին աուդիտը պետք է իրականացվի ԿԳՆ-ի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից: Սա ԿԳՆ-ին հնարավորություն է տալիս միջամտել բուհերի ֆինանսական ինքնավարությանը: Բացի ԿԳՆ-ի կողմից բուհերում իրականացվող աուդիտից, այն բուհերը, որոնց տարեկան համախառն եկամուտը գերազանցում է մեկ միլիարդ դրամը (մոտ 2,5 մլն ԱՄՆ դոլար), պետք է պարտադիր աուդիտի ենթարկվեն անկախ աուդիտորի կողմից: Երկու դեպքերում էլ աուդիտը սահմանափակվում է ֆինանսական հաշվեքննությամբ և մանրամասն չի ուսումնասիրում ծախսերի արդյունավետությունն ու արդարացվածությունը: Այնուհետև, Հաշվապահական հաշվառման օրենքը խոշոր կազմակերպություններից, այդ թվում ութ պետական բուհերից, պահանջում է հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները:⁷¹ Հաշվետվությունները հրապարակվում են

⁶⁹<http://www.gov.am/files/docs/915.pdf>

⁷⁰<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65056>

⁷¹ Խոշոր կազմակերպությունները նրանք են, որոնք համապատասխանում են առնվազն հետևյալ երկու չափանիշներին. ա) հաշվետու տարվա հասույթը (որի համար ֆին.հաշվետվություն է կազմվում) գերազանցում է 1 միլիարդ ՀՀ դրամը; և բ) հաշվետու տարվա վերջին բալանսային ակտիվները (որի համար ֆին.հաշվետվություն է կազմվում) գերազանցում է 1 միլիարդ ՀՀ դրամը. Պետական բուհերը, որոնք պարտավոր են հրապարակել տարեկան ֆին.հաշվետվությունները, հետևյալն են. (i) ԵՊՀ, (ii) ԵՊՃՀ, (iii) ՀՊՏՀ, (iv) ԵՃՇՊՀ, (v) ՀՊԱՀ, (vi) ՀՊՄՀ, (vii) ԵՊԼՀ և (viii) ԵՊԲՀ:

մամուլի, համացանցի կամ գրքույկների միջոցով միայն աուդիտ անցնելուց հետո, որոնց կցվում է նաև աուդիտորի եզրկացությունը:

58. **Կառավարության կողմից կիրառության մեջ մտցված նոր էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը կոռուպցիայի նվազեցման մի արդյունավետ միջոց է:** Կառավարությունը 2009 թ.-ին կիրառության մեջ է մտցրել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգը, որը պետք է կիրառվի գործադիր իշխանության իրավասության ներքո գրեթե բոլոր կառավարական և պետական մարմինների կողմից⁷²: Թեև ՊՈԱԿ-ները պարտադրված չեն կիրառել այն, բոլոր պետական բուհերը սկսել են այն կիրառել: Դա արդյունավետ միջոց է կոռուպցիոն ֆինանսական գործարքների նվազեցման և բողոքների, դիմումների և հրահանգների արձագանքման համար, որովհետև ֆինանսական ցանկացած շարժ և դրա ետևում կանգնած անձն էլեկտրոնային ձևով փաստաթղթավորվում է և հեշտությամբ մատչելի է առցանց:⁷³

59. **Պետության կողմից ստուգումները սպառնում են բուհերի ֆինանսական ինքնավարությունը, սակայն, բուհերի ստուգումների հետ առնչվող օրենքը բարելավվել է:** Համաձայն ՊՈԱԿ-ների մասին օրենքի՝ ՊՈԱԿ-ի ֆինանսական գործունեությունը վերահսկում է հիմնադիրը, նրա լիազորված մարմինը և օրենքով լիազորված այլ պետական մարմիններ:⁷⁴ Բուհերում ֆինանսական վերահսկողության կամ տեսչություն իրականացնող հիմնական պետական մարմինները ԿԳՆ-ն է, Պետական եկամուտների կոմիտեն, Վերահսկիչ պալատը և ՀՀ ֆինանսների նախարարությանը: Վերջին երկու տարիներին նրանք լիազորված է վերահսկել և ստուգել միայն պետական կամ համայնքային բյուջեների կողմից հատկացված միջոցները: Այդ մարմիններից յուրաքանչյուրը պետք է ստուգի գործունեության իրեն բնորոշ ոլորտը՝ ինչպես սահմանված է վերոհիշյալ օրենքով, սակայն, իրականում, նրանք կրկնում են միմյանց: Պետության կողմից ստուգումները երբեմն կարող են սպառնալ բուհերի ֆինանսական ինքնավարությանը:

60. **Ի տարբերություն պետականին, կառավարությունը բոլորովին չի կարգավորում մասնավոր բուհերի ֆինանսավորումը, և նրանցից յուրաքանչյուրը յուրովի է որոշում իր ֆինանսական ամբողջականության դրսևորման ձևը:** Մասնավոր բուհերը ենթակա չեն տարեկան արտաքին աուդիտի, եթե նրանց ընդհանուր եկամուտը չի գերազանցում մեկ միլիարդ դրամը: Այս հետազոտության ընթացքում չորս հարցվածներից երեքը իսկապես աուդիտի չեն ենթարկվել, իսկ մեկը՝ մեկ տարուց ավելի մեծ հաճախականությամբ: Չնայած նրան, որ նրանց գրեթե

⁷² Բացի ԱԺ-ից և Նախագահի աշխատակազմից

⁷³ Օրագիրն այնքան արդյունավետ է, որ նույնիսկ բանկերի և գործարանների նման առևտրային կազմակերպությունները կիրառում են այն:

⁷⁴ Ստուգումների կազմակերպման և իրականացման մասին օրենքը տալիս է ստուգումներ անցկացող պետական բոլոր մարմինները ցանկը:

բոլոր եկամուտները ստացվում են ուսման վարձերից, ուսանողները որևէ կերպ չեն կարող իմանալ, թե ինչպես է ծախսվում իրենց կողմից վճարված գումարները: Դրան հակառակ, Հայաստանի ամերիկյան համալսարանը միակ բուհն է Հայաստանում, որը ստեղծվել է իր սեփական ուղիտի կոնոնակարգ և ուղեցույց:⁷⁵

3.2.3 Ուսանողների մասնակցությունը

61. Հայաստանում բարձրագույն կրթության կառավարման մեջ ուսանողների մասնակցությունը մինչ օրս խառը արդյունքների է հանգեցնում, սակայն այն հնարավորություն ունի նպաստելու բարձրագույն կրթության որակի և համապատասխանության բարելավմանը և պայքարելու կոռուպցիայի դեմ: Ավելորդ է ասել, որ բարձրագույն կրթության հիմնական շահառուներն ուսանողներ են, և նրանց ձայնը կարևոր է բարձրագույն կրթության բարելավման համար: Հայաստանում ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը հիմնականում սահմանափակվում է միայն համալսարանի խորհրդում, գիտական խորհրդում և ամբիոնների խորհուրդներում պասիվ մասնակցությամբ: Մակայն, ըստ Transparency International-ի վերոհիշյալ հարցման, ուսանողների մեծ մասը, իրոք, շահագրգռված են մասնակցելու այդ աշխատանքներին իրենց իրավունքները պաշտպանելու համար, և հաշվետվողականությունը բարելավելու շատ կոնկրետ մտքեր ունեն:⁷⁶ Ցավոք, նրանց ձայնը լսելի չէ, քանի որ, որպես կանոն, նրանցից շատերը չգիտեն, թե ինչպես արդյունավետորեն մասնակցել առանց այնպիսի ակտիվ ուսանողական մարմնի, որին նրանք կարող էին վստահել: Բացառություն է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը, որն ուսանողներին ակտիվորեն ներկայացնում է համալսարանի խորհրդում և դրական է գնահատվում այլ ուսանողների կողմից: Ուսանողների մասնակցության մյուս լավ օրինակը Ֆրանսիական համալսարանն է, որտեղ ներքին կանոնակարգեր և ընթացակարգեր են մշակել՝ սահմանելով ուսանողների արտահայտման իրավունքները: Օրենքի նոր պահանջով 2011թ-ից բուհերը իրենց բյուջեյում պարտավոր են նախատեսել ուսանողական խորհուրդների համար առանձին տոդ, որը կարող է բարձրացնել ուսանողների մասնակցությունը: Մյուս կողմից, եղել են դեպքեր, երբ ուսանողները չարաշահել են իրենց ձայնի իրավունքը և, օրինակ՝ խիստ դասախոսներին մեղադրել են անարդարության և կոռուպցիայի մեջ:⁷⁷ Ուսանողները կարող են նպաստել ավելի

⁷⁵ <http://aua.am/faculty/>

⁷⁶ Ուսանողների աշխատանքային խումբը կոռուպցիայի դեմ պայքարի տարբեր միջոցներ է առաջարկում, որոնցից են. պարբերաբար գնահատել դասախոսներին և հրապարակել արդյունքները; ստեղծել անկախ և անկողմնակալ հակակոռուպցիոն մարմին՝ Օմբուցմեն; և ուսխորհուրդների հզորացման միջոցով ուսանողներին ներգրավել թափանցիկության և կոռուպցիայի դեպքերի մոնիտորինգի խթանման համար:.

⁷⁷ Անեկդոտային պատմություններ ԵՊՀ-ից և ՊՄՀ - ից

դրական արդյունքների ձեռքբերմանը, եթե ավելի լավ տեղեկացված լինեն կառավարման և որակի ապահովման իրենց պոտենցիալ դերերի մասին և պատրաստված լինեն դրանում:

3.2.4 Կառավարման և վարչարարության կարողություններ

62. Պետական բուհերի առավել հիմնարար խնդիրը ինստիտուցիոնալ մակարդակով ֆինանսական կառավարման և վարչարարության կարողությունների բացակայությունն է, որը չափազանց կենտրոնացված է, կատարվում է վերից՝ վար և չի արտացոլում ուսանողների և գործատուների պահանջները: Սովորաբար պետական բուհերի ֆինանսավորումը կենտրոնացված է և վերահսկվում է կենտրոնական գործադիրի կողմից, և այդ պայմաններում բուհերը անելու քիչ բան ունեն: Բյուջեները հաճախ պլանավորվում են առանց հաշվի առնելու հաստատության ռազմավարական ծրագրերը կամ անտեսում են նրա կարիքները: Հայաստանի բուհերի և ամերիկյան համալսարանների (հիմնականում Նյու Յորքի պետական համալսարան)⁷⁸ ինստիտուցիոնալ ֆինանսավորման համակարգերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս այն ոլորտները, որտեղ ՀՀ բուհերի համար հզորացման հնարավորություններ կան. մշակել ռազմավարական և գործողությունների ծրագրերի իրականացմանը համադրելի բյուջե և սահմանել այնպիսի ուսման վարձ, որ կարտացոլի տարբեր միջոցառումների փաստացի ծախսերը: Ինչ վերաբերում է բուհերի վարչարարության կարողություններին, ապա բուհերը ինքնակառավարվող իրավաբանական անձիք են և կարող են սահմանել սեփական հաշվառման, հաշվետվությունների և նման այլ ընթացակարգեր: Սակայն, պետական բուհերից շատերը հետևում են կառավարության կողմից մշակված վարչական ընթացակարգերին պարզապես այն պատճառով, որ նրանք հնարավորություն չունեն այլ կերպ վարվելու⁷⁹, եթե նույնիսկ այդ ընթացակարգերը հատուկ մշակված չեն բուհերի համար և, հետևաբար, բուհերի կառավարման և վարչարարության համար հարմար չեն:

63. Կրթության որակի և համապատասխանության ապահովման համար բուհերին անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակով վերահսկել և մշտադիտարկել իրենց կատարողական ցուցանիշները և սերտորեն կապված լինել աշխատաշուկային, սակայն բուհերից քչերն են դա արդյունավետորեն անում: Բուհերից շատերը արդեն մաշակել են իրենց սեփական կատարողական ցուցանիշները՝ իրենց

⁷⁸ Օրինակ՝ Balayan, Gabriel, 2011, *Financing system of SUNY Plattsburgh, comparison with Armenian system of Higher Education*, IREX (the International Research & Exchange Board) University Administration Support Program (<http://www.irex.org/sites/default/files/Balayan%20Case%20Study.pdf>) նկարագրում է, թե ինչպես կարող են Հայաստանի բուհերը բարելավել իրենց ֆինանսական կառավարման կարողությունները օրարերկրյա բուհերի օրինակով:

⁷⁹ Կառավարության որոշում N 890-Ն ՀՀ կառավարության վարչական ընթացակարգերը հաստատելու մասին, 2.06.2002թ.

ռազմավարության և նպատակների արդյունքները մշտադիտարկելու և գնահատելու համար:⁸⁰ Սակայն նրանց մեծ մասը աշխատաշուկայի մասին տեղեկատվության համակարգված հավաքագրում չեն կատարում և չեն հետևում իրենց շրջանավարտների զբաղվածության իրավիճակին: Բուհերից քչերն են ներգրավել մասնավոր հատվածին կամ շրջանավարտներին իրենց խորհրդի (կառավարման խորհրդի) կամ գիտական խորհրդի կազմում, ինչը կօգներ աշխատաշուկայում ներկա պահանջարկը արտացոլել իրենց կողմից մշակվող կրթական ծրագրում և ուսումնական առարկայական ծրագրերում: Միջկառավարական և միջպետական բուհերը այս բնագավառում շատ ավելի լավ են աշխատում: Օրինակ, Սլավոնական համալսարանը 2008 թ-ին, առաջինը Հայաստանում, հիմնել է համալսարանական Կարիերայի Կենտրոն: Սկզբում, Զբոսաշրջության Կարիերայի կենտրոնը բարելավեց համալսարանի և մասնավոր ձեռնարկությունների միջև կապերը և հաջողությամբ օգնեց 15-20 տոկոսով ավելացել աշխատատեղերի տեղաբաշխումը զբոսաշրջության ոլորտում: Մասնավոր հատվածի հետ սերտ համագործակցությունը համալսարանին հնարավորություն տվեց պարբերաբար թարմացնել առարկայական ծրագիրը, առաջարկել պրակտիկայի ծրագրեր և արագ արձագանքել գործատուների պահանջներին:

⁸⁰ Օրինակ՝ ԵՊՃՀ – ի կարարողականի գնահատման ցուցանիշները տես. Gevorgyan, Rita, 2011, *Total Quality Management as Education Quality Enhancement Technique* (վերցված է՝ https://docs.google.com/viewer?url=http%3A%2F%2Fwww.gwu.edu%2F~rpsol%2Fpreconf%2FDeming_Seminar_2011%2F2011_Deming_Rita_Paper.doc).

IV. Եզրակացություն

64. Բոլոնիայի գործընթացին 2005 թ.–ին միանալուց ի վեր՝ Հայաստանի կառավարությունն ու Բարձրագույն ուսումնական հաստատությունները (ԲՈՒՀ), Բարձրագույն կրթության համակարգի բարեփոխմանն ենթարկելով նշանակալի առաջընթաց են արձանագրել, որոնցից են. Եվրոպական համակարգին համահունչ՝ որակի ապահովման ազգային համակարգի ստեղծումը, Բարձրագույն կրթության առավել օբյեկտիվ և արդյունավետ ֆինանսավորման ռազմավարությանը: Չնայած բազմաթիվ դրական զարգացումներին, բարեփոխումները չեն առնչվել կառավարման և վարչարարության խնդիրներին: Ընթացիկ բարեփոխումներից առավելագույն օգուտներ քաղելու և Բարձրագույն կրթությունը հետագա զարգացնելու համար ՀՀ կառավարությանը՝ բուհերի հետ միասին, անհրաժեշտ է համալսարանի կառավարումը և ղեկավարումը դնել Բարձրագույն կրթության ամբողջ համակարգի բարեփոխումների սրտում և գտնել փոխադարձ ընդունելի և հստակ կառավարման մի համակարգ: Հետազոտության երկու հիմնական մեխանիզմների կիրառմամբ սույն ուսումնասիրությունը հետապնդում է երկու նպատակներ: Առաջինը՝ այն փորձում է ուրվագծել Հայաստանում Բարձրագույն կրթության կառավարման կառուցվածքը և դրա իրականացման ձևը: Երկրորդը՝ այն նպատակ ունի կառավարման համակարգը հզորացնելու և դրա իրականացմանն ուղղված քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ անել: Հիմնական եզրակացություններն ու առաջարկություններն ամփոփված են ստորև:

I. Համակարգային կառավարման շրջանակը

65. Բարձրագույն կրթությունը կարգավորող դաշտը փոփոխությունների կարիք ունի, քանի որ օրենքները հակասում են միմյանց, ինչը հանգեցնում է բուհերի գործունեության մեջ զգալի միջամտությանը: Բարձրագույն կրթություն մասին 2004 թ. օրենքը (ԲԿՕ) և Կրթության մասին 1999թ. օրենքը առաջին հայացքից սահմանում են Բարձրագույն կրթության ընդհանուր կառավարման շրջանակները և բուհերին լայն ինքնավարություն են ապահովում: Սակայն ինքնավարության հետ կապված հակասություններ կան նույնիսկ ԲԿՕ–ում և դրա ենթաօրենսդրական ակտերում: Ավելին, ՊՈԱԿ-ի մասին 2001թ. օրենքը և Պետական կառավարման մարմինների մասին 2001թ. օրենքը հակասում են կրթության մասին օրենքներին և լիազորում են ՀՀ կառավարությանը՝ որպես հիմնադրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը (ԿԳՆ)՝ որպես վերահսկող մարմնի, անտեսել բուհերի ինքնավարությունը: Հակասական օրենսդրությանը չի հաջողվել ինքնավարության և հաշվետվողականության միջև համարժեք հավասարակշռություն ապահովել և Հայաստանի բուհերին օգնել առավելագույնի հասցնել իրենց ներուժը: Հայաստանի Ազրարային համալսարանի վերջերս կատարած վերազրանցումը ՊՈԱԿ–ից՝ հիմնադրամի, ցույց է տալիս բուհերի առաջ ծառայած իրավական

խոչընդոտների կարճաժամկետ լուծման ճանապարհը, որը կարող է հանգեցնել պետական բուհերի իրավական կարգավիճակի հիմնանորոգմանը: Թեև մասնավոր բուհերը պետականների նման խիստ կարգավորման կամ վերահսկողության չեն ենթարկվում, այդուհանդերձ, նրանց զարգացմանը նպաստող օրենք նույնպես չկա: Օտարերկյա բուհերի մասնաճյուղերն ամենաքիչն են վերահսկվում ԿԳՆ-ի կողմից, և այդ մասին բավարար տեղեկատվություն չկա:

Առաջարկություն 1 – Վերանայել կարգավորող դաշտը

- **Վերասահմանել կառավարության և բուհերի դերերը:** Բարձրագույն կրթությունը բարելավելու համար Հայաստանը պետք է անհապաղ վերանայի գործող օրենսդրությանը և *տրամաբանական կառավարման մոդելի* համար մշակի մի կուռ կարգավորող դաշտ, որով կվերասահմանվեն պետության և բուհերի դերերը: Նոր սահմանված համակարգը կառավարությանը պետք է տա քաղաքականություն ձևավորելու, վերահսկելու և գնահատելու կարողություններ, որոնցով, մի կողմից բուհերին կառաջնորդի դեպի ազգային նպատակների իրականացումը և, մյուս կողմից էլ, նրանց հնարավորություն կտա արդյունավետորեն իրականացնել ինքնավարությունը և պահանջել բուհերից առավել հաշվետու լինել ուսանողների և հանրության առաջ: Շատ կարևոր է, որ շահակիցների ծավալուն խորհրդակցության միջոցով կառավարությունն ու բուհերը համատեղ ուսումնասիրեն և գտնեն Հայաստանին հարմար մի հավասարակշռություն՝ կառավարության և բուհերի դերերի և ինքնավարության ու հաշվետվողականություն միջև:
- **Մշակել կարգավորման մի կուռ դաշտ:** Փոխադարձ համաձայնեցված կառավարման կառուցվածքի հիման վրա, կառավարությունը պետք է վերանայի բարձրագույն կրթության մասին գործող օրենսդրությունը և մշակի մի միասնական և կուռ կառավարման դաշտ: Այն պետք է ենթադրի նաև մասնավոր բուհերի ավելի ակտիվ և մրցակցային մասնակցությունը խթանելու պայմաններ:

66. Շատ կարևոր է, որ մասնագիտական կրթության համակարգը դիտարկվի որպես համալսարանական և ոչ-համալսարանական մասնագիտական հաստատությունների (ՄՈւՀ) համապարփակ ցանց, որը բազմազան գիտելիքներ և հմտություններ է առաջարկում: Գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքը (ԳՀ&ՄԱ) ևս մի ոլորտ է, որն անհրաժեշտ է դիտարկել բարձրագույն կրթության հետ մեկտեղ: Խիստ անհրաժեշտ է համալսարանական հետազոտությունը և կրթությունը ինտեգրել երկրի ԳՀ&ՄԱ-ի կարողություններին՝ հանուն մրցունակ տնտեսության: Այդուհանդերձ, սույն հետազոտությունը չի տարածվում ոչ-համալսարանական բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա և չի արտացոլում Հայաստանի այն իրականությունը, որտեղ ոչ-համալսարանական մասնագիտական կրթությունը և ԳՀ&ՄԱ-ը կարգավորվում են այլ օրենքներով, կանոնակարգերով և ռազմավարությամբ, և սույն

զեկույցում այդ ամենը արտացոլելը դժվար է: Մա մի ոլորտ է, որը մոտ հեռանկարում հետագա հետազոտման և զարգացման կարիք ունի:

Առաջարկություն 2 – Ստեղծել մասնագիտական կրթության բազմատարր, համապարփակ համակարգ

- **Անցում, մի կողմից՝ դեպի համալսարանական և ոչ-համալսարանական մասնագիտական կրթության, և մյուս կողմից՝ մասնագիտական կրթության և գիտահետազոտության ինտեգրմանը:** Համակարգային թերությունն է պատճառը, որ համալսարանական և ոչ-համալսարանական մասնագիտական կրթությունը (այսինքն, մասնագիտական և արհեստագործական ուսումնարանները), և բարձրագույն կրթությունն ու գիտական հետազոտությունը ինտեգրված չեն: Մասնագիտական կրթության միասնական համակարգ ձևավորելու համար կառավարությանը խորհուրդ է տրվում ստեղծել աշխատանքային խումբ և մտածել, թե ինչպես մշակել բազմատարր, համապարփակ մասնագիտական կրթության ցանց՝ նպատակ ունենալով միջնաժամկետ հեռանկարում վերացնել ներկայիս մասնատվածությունը:

67. **Ենթաձյուղի ամենանշանակալի զարգացումներից մեկը՝ որակի ապահովման ազգային համակարգի ստեղծումն էր, որը հետագա հզորացման կարիք ունի միջազգայնորեն ճանաչելի համակարգի վերածվելու համար:** Հիմնադրվելով 2009 թ. – ին, ՈԱԱԿ –ը զգալի առաքնությամբ է արձանագրել Հայաստանում որակի ապահովման համակարգի զարգացման գործում, սակայն դեռևս կան հետագա անելիքներ, որպեսզի այն դառնա միջազգայնորեն ճանաչված որակի ապահովման գործակալություն: Բուհերն ինքնավերլուծությունը կիրառել են որպես ինստիտուցիոնալ մակարդակով որակի բարելավման մեխանիզմ: Ըստ բուհերի և ծրագրերի հավատարմագրման նախնական փուլի՝ բուհերից շատերին այս փուլում կարող են ժամանակավոր հավատարմագրեր շնորհել և հնարավորություն տալ երկամյա ժամկետում կրկին դիմել լիարժեք հավատարմագրման համար:

Առաջարկություն 3 – Ուժեղացնել որակի ապահովման համակարգը

- **Որակի ապահովման գործակալությունը:** Շատ կարևոր է, որ կառավարությունն ու ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) շարունակեն մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) համար ստեղծել բարենպաստ միջավայր, որով կաջակցեն ամրապնդել Հայաստանի ազգային որակի ապահովման համակարգը՝ որպես միջազգայնորեն ճանաչված գործակալություն:
- **Մշակել որակի ապահովման նոր մոդել:** Որակի ապահովման ձևն ու պատասխանատվությունը պետք է տեղափոխվեն ԿԳՆ–ի կողմից

կրթական և ուսումնական ծրագրերի պետական խիստ չափորոշիչների և դասավանդման գործընթացներ սահմանելուց՝ դեպի ՈԱԱԿ-ի կողմից որակի չափանիշների և ուսման արդյունքների սահմանումը:

- *Մշակել մոնիտորինգի և գնահատման մեխանիզմ*։ Բարձրագույն կրթության և կառավարման համապարփակ համակարգը գործարկելուց հետո ԿԳՆ-ը անհրաժեշտ կլինի մշակել մոնիտորինգի և գնահատման մեխանիզմ, այդ թվում, հավատարմագրման, համալսարանի վարկանիշի և ֆինանսավորման հետ կապված հիմնական կատարողականի ցուցանիշներ.
- *Հիմնել աշխատաշուկայի դիտակետեր*։ Ցանկալի կլինեն ստեղծել ինչպես ազգային մակարդակով աշխատաշուկայի դիտակետ, այնպես էլ ուսումնական հաստատությունների հենքի վրա հիմնված շրջանավարտների զբաղվածությանը հետևող հետազոտություններ՝ դրանով ամրապնդելով աշխատաշուկայի ու բարձրագույն կրթության միջև կապը և բարելավել բարձրագույն կրթական ծրագրերի որակն ու համապատասխանությունը:

68. **Բարձրագույն կրթության պետական ֆինանսավորումը սահմանափակ է և անհավասար**: Պետական բուհերը, միջին հաշվով, կառավարությունից ստանում են իրենց եկամուտի ընդամենը 21 տոկոսը պետպատվերով անվճար սովորող ուսանողների ուսումը ֆինանսավորելու համար: Այս հանգամանքը Հայաստանին դասում է աշխարհի այն երկրների շարքին, որտեղ բարձրագույն կրթության պետական ֆինանսավորումն ամենացածրն է: Արդյունքում պետական բուհերի կախվածությունը ուսման վարձերից մեծանում է: Հիմնականում արժանիքների վրա հիմնված պետական ֆինանսավորումը և գնալով ավելացող ուսման վարձը զրկում է սոցիալ-տնտեսական անապահով ուսանողներին բարձրագույն կրթության հասնելիությունից: Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր 2011թ. ռազմավարությունը նպատակ ունի բարձրագույն կրթության ֆինանսավորումը դարձնելու առավել արդարացի, մրցունակ ու կայուն, սակայն, առանց ընդհանուր պետական ֆինանսավորումը էապես բարձրացնելու, այն չի կարող հանգեցնել նախանշված որակին:

Առաջարկություն 4 – Դիվերսիֆիկացնել բարձրագույն կրթության ֆինանսավորումը

- *Ամրապնդել բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումները*։ Կառավարությունն արդեն նախաձեռնել է բարձրագույն կրթության ֆինանսավորման համապարփակ բարեփոխումներ և պետք է շարունակի այդ գործընթացը: Բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր մոդելը պետք է ապահովի ավելի մեծ կայունություն և խթանի որակի բարելավումը և

նորարարությանը: Նման մոդելը պետք է ենթադրի նեղ կրթաթոշակային համակարգից աստիճանական անցում դեպի որակը և համապատասխանությունը խթանող նպատակային, առավել առաջնայնացված, պահանջարկի վրա հիմնված, ճկուն և մրցակցային ֆինանսավորման:

- **Մասնավոր ֆինանսավորման ներգրավում.** Ֆինանսավորման համակարգն արդիականացնելիս ոլորտին, հավանաբար, անհրաժեշտ կլինեն և պետական, և մասնավոր միջոցների ներգրավում արմատական բարելավումներին նոր թափ հաղորդելու համար: Կառավարությունը նախ պետք է դիտարկի պետական ֆինանսավորումը ավելացնելու հարցը, որը ներկայումս ամենացածրերից մեկն է աշխարհում և ինտեգրի բարձրագույն կրթության և գիտության ֆինանսավորումը: Նրան նաև անհրաժեշտ է մոբիլիզացնել մասնավոր ներդրումները՝ թույլ տալով բուհերին արդյունավետորեն իրականացնել իրենց ֆինանսական ինքնուրույնությունը և բուհերի ու մասնավոր ներդրողների համար հարկային արտոնություններ սահմանելով:

II. Ինստիտուցիոնալ կառավարում

69. ԲԿՕ-ը և Կրթության մասին օրենքը սկզբունքորեն ապահովում են բուհերի ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները: Սակայն ԲԿՕ-ը՝ իր ենթաօրենսդրական ակտերով հանդերձ, կառավարությանը հնարավորություն է տալիս միջամտել բուհերի ինստիտուցիոնալ կառավարմանը: Մասնավորապես, կառավարության ազդեցությունը ներկառուցված է ինստիտուցիոնալ կառավարման հանակարգի մեջ: Կառավարությունը ներգործում է բարձրագույն կրթության կառավարման վրա Խորհրդում իր կողմից նշանակված ներկայացուցչական մեծամասնության ունենալու և նախագահի պաշտոնին քաղաքական գործիչ նշանակելու միջոցով: Ռեկտորների ընտրությունը ենթադրաբար մրցակցային է և տեսականորեն՝ ոչ քաղաքական, սակայն իրականում, կարծես թե, այն երթարկվում է մեծ քաղաքական ազդեցության: Ռեկտորատը խորհրդակցական մարմին է, սակայն իրականում այն ընթացիկ և կարևոր ընթացակարգերի հզոր գործիք է: Ակադեմիական հարցերը որոշող կարևորագույն պաշտոններում անձանց ընտրության գործընթացը բավականաչափ մրցակցային չէ: Ի տարբերություն պետական բուհերի, միջկառավարական բուհերի կառավարման կառուցվածքն ընդհանուր առմամբ ավելի մրցակցային է և ճկուն: Դրան ի հակադրություն, տեղական մասնավոր բուհերի կառավարման համակարգն ընդհանրապես չի կարգավորվում:

70. Մի կողմից Կրթության մասին օրենքները ապահովում են բուհերի ակադեմիական ազատությունները, իսկ մյուս կողմից ենթաօրենսդրական ակտերը, իրականում, սահմանափակում են դրանք: Մինչ բուհական միասնական ընդունելության քննությունները օգնում են ապահովել ուսանողների ընդունելության

արդարությունն ու թափանցիկությունը, կառավարության վերահսկողությունը մասնագիտությունների առումով բոլոր բուհերի ուսանողական տեղերի նկատմամբ չափազանց է: Գործող օրենսդրությունը ոչ թույլ է տալիս, ոչ էլ խրախուսում է բուհերին ակտիվորեն զբաղվել գիտական հետազոտությամբ և ստեղծագործական աշխատանքով:

71. Մարդկային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ ինքնավարությունը արդյունավետորեն չի կիրառվում: ԲԿՕ – ը նախատեսում է մարդկային ռեսուրսների կառավարման լայն ինքնավարություն, սակայն դա տակավին չի նշանակում, թե բուհերը առանց ցուցանիշների գնահատման բավարար համակարգ սեղծելու իրենց անձնակազմը արդյունավետ են կառավարելում: Պետական բուհերը ինքնուրույն են որոշում իրենց վարձատրության չափը, սակայն վարձատրության համակարգում նրանցից քչերն են հաշվի առնում աշխատակիցների կատարողական ցուցանիշները:

72. Իրար հակասող օրենքները, նույնպես, սահմանափակում են ֆինանսական ինքնավարությունը. Չնայած ԲԿՕ-ով նախատեսվող ֆինանսական լայն ինքնավարությանը, պետական բուհերը իրականում կանգնած են տարբեր տեսակի կանոնակարգերի առաջ: Ամենացավալին այն է, որ բուհերի ֆինանսական ինքնավարությունը վտանգված է, որովհետև շատ բուհերի ֆինանսական կարողությունները այնքան թույլ են, որ հազիվ թե կարողանան ֆինանսական ինքնավարություն իրականացնել:

73. Բարձրագույն կրթության համակարգը ընդհանուր առմամբ և ինստիտուցիոնալ մակարդակով չունի ցուցանիշների համար հաշվետվողականության կարողություններ: Ընդհանրապես, Հայաստանի բուհերում հաշվետվողականությունը թույլ դիրքերի վրա է տարբերվում է բուհից՝ բուհ: Առաջինը, բուհի արժեքային համակարգը ընդհանուր առմամբ վտանգված է, եթե նույնիսկ որոշ բուհեր որոշակի ճիգեր են գործադրում: Պետական բուհերը ենթարկվում են ամենամյա աուդիտի, սակայն պարտադիր չէ, որ ուսման մակարդակը առավելագույս բարելավվելու համար կատարված ծախսերի արդյունավետության վերաբերյալ տեղեկություններ տրամադրեն: Կառավարության կողմից Նոր էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը ներդրվել է որպես կոռուպցիայի նվազեցման արդյունավետ միջոց, սակայն միայն մի քանի բուհեր են այն կիրառում: Պետական ստուգումները վտանգում են պետական բուհերի ֆինանսական ինքնավարությանը, սակայն որոշակի բարելավումներ են տեղի ունեցել ստուգումների մասին օրենքներում: Մյուս դեպքում էլ, կառավարությունը ընդհանրապես չի վերահսկում մասնավոր բուհերի ֆինանսավորումը: Բարձրագույն կրթության կառավարման մեջ ուսանողների մասնակցությունը խառը արդյունքների է հանգեցրել, սակայն այն կարող է վերածվել մի արդյունավետ մեխանիզմի՝ բարձրագույն կրթության որակը և համապատասխանությունը բարալավելու և կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Պետական բուհերի ինստիտուցիոնալ

մակարդակով առավել հիմնարար խնդիրը ֆինանսական կառավարման և վարչարարության կարողությունների բացակայությունն է, որը չափազանց կենտրոնացված է, կատարվում է վերից՝ վար և չի արտացոլում ուսանողների և գործատուների պահանջները: Կրթության որակի և համապատասխանության ապահովման համար բուհերին անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակով վերահսկել և մշտադիտարկել իրենց կատարողական ցուցանիշները և սերտորեն կապված լինել աշխատաշուկային, սակայն բուհերից քչերն են դա արդյունավետորեն անում:

Առաջարկություն 5 – Հզորացնել համակարգը և ինստիտուցիոնալ կարողությունները

- **Հզորացնել քաղաքականություն մշակողների կարողությունները.** Նոր կառավարման համակարգն իրականացնելու համար ԿԳՆ-ին անհրաժեշտ է ամրապնդել իր դերը՝ քաղաքականության մշակման ու մոնիտորինգի և վերահսկողության հարցերում, որպեսզի առաջնորդի բուհերին հասնելու ազգային նպատակներին: Կառավարությանն անհրաժեշտ է դիտարկել բարձրագույն կրթության և գիտության նկատմամբ իր լիազորությունների ինտեգրման հարցը:
- **Ամրապնդել բուհերի կարողությունները.** Իրենց հավատարմագրման գործընթացի մասը կազմող ինքնավերլուծության հիման վրա՝ յուրաքանչյուր բուհ պետք է շարունակի իր կարողությունների հզորացումը ինքնավարությունը արդյունավետ կիրառելու համար և հաշվետու լինի իր կողմից մատուցած ծառայությունների առաջ: Կառավարությունը, ԿԳՆ-ը և ՈԱԱԿ-ը պետք է բավարար տեխնիկական աջակցության և ֆինանսական միջոցներ տրամադրեն կարողությունների զարգացման գործընթացին աջակցելու համար:

74. Ամփոփելով նշենք, որ սույն ուսումնասիրությամբ պարզվել է, որ բարձրագույն կրթության կառավարման համակարգում կառավարության և բուհերի դերերը սահմանող հակասական իրավական դաշտը և ինքնավարությունն ու հաշվետվողականությունը արդյունավետորեն իրականացնելու կառավարության և բուհերի անբավարար կարողությունները Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի հիմնական թույլ կողմերն են: Հետևաբար, անհրաժեշտ է հրատապորեն մշակել կառավարման մի հզոր համակարգ, ինչպես նաև ուժեղացնել համալսարանների և համակարգի այն ղեկավարների կառավարման և վարչարարական հմտությունները, ովքեր պատասխանատու են լինելու կայուն կերպով ապահովել ցանկացած բարեփոխման հաջողությունը:

Հղումներ

- Balayan, Gabriel, 2011, *Financing System of SUNY Plattsburgh, Comparison with Armenian System of Higher Education*, IREX (International Research & Exchange Board) University Administration Support Program (<http://www.irex.org/sites/default/files/Balayan%20Case%20Study.pdf>)
- Center for Regional Development, Transparency International Armenia, 2007, *Corruption Perception in Armenia: 2007 Phone Survey*, Yerevan.
- Easton, Judith S., 2009, "Accountability: an "old issue in a new era", *Inside Accreditation with the President of CHEA*, Vol. 5, No. 4, June 2, 2009 (http://www.chea.org/ia/IA_2009.06.02.html).
- Eurydice, 2008, *Higher Education Governance in Europe: Policies, Structures, Funding and Academic Staff*, European Commission.
- Fielden, John, 2008, *Global Trends in University governance*, World Bank Education Working Paper Series No. 9.
- Fried, Jochen, 2006, "Higher education governance in Europe: autonomy, ownership and accountability – a review of the literature", in Kohler, J. & Huber, J. eds., 2006, *Higher Education Governance between Democratic Culture, Academic Aspirations and Market Forces*, Council of Europe.
- Gevorgyan, Rita, 2011, *Total Quality Management as Education Quality Enhancement Technique* (https://docs.google.com/viewer?url=http%3A%2F%2Fwww.gwu.edu%2F~rpsol%2Fpreconf%2FDeming_Seminar_2011%2F2011_Deming_Rita_Paper.doc).
- Karakhanyan, Susanna, 2012, "Governance of Higher Education in Armenia", in Bergan S., Egron-Polak, E., Kohler, J., Purser, L., *Leadership and Governance in Higher Education: Handbook for Decision-makers and Administrators*, Berlin: Raabe Academic Publishers, pp. 113-129.
- National Center for Professional Education Quality Assurance (ANQA), 2011, *ANQA Accreditation Manual*.
- Organisation for Economic Co-operation and Development (OECD), 2012, *Education at A Glance 2012*.
- Organization for Security and Co-operation in Europe (OSCE), Office in Yerevan, 2010, *Student Perception on Corruption in the Armenian Higher Education System*.
- Roger King, 2008, *Private universities and public funding: models and business plans*. Universities UK: London (http://www.universitiesuk.ac.uk/Publications/Documents/Policy_Commentary1.pdf).
- World Bank, 2011, Education Chapter, Public Expenditure Review.

Ուսումնասիրությանը մասնակցած համալսարանների և քոլեջների ցանկը

		Types	Universities
Universities	State	Non-Commercial State Organizations	Armenian State Pedagogical University (ASPU)
